

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏՆՍՌՈԼՈԳԻԱՆԵՐ



ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՊՏՀ գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր,
տնտեսագիտության դրվոր, պրոֆեսոր

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Տեղեկատվական տեխնոլոգիաների բուռն զարգացման ժամանակաշրջանում ազգային տեղեկատվական ենթակառուցվածքի կատարելագործումը կենսական խնդիր է ցանկացած երկրի առաջընթացի համար: Ազգային տեղեկատվական ենթակառուցվածքը գիտելիքահենք տնտեսության հիմնայուներից է, որը նպաստում է գիտելիքի ստեղծմանը, տարածմանը և արդյունավետ կիրաօնմանը: Հետևաբար՝ այդ ենթակառուցվածքի զարգացման հիմնախնդիրներն էական սոցիալական ու տեխնոլոգիական բնույթի խոչընդոտ են տեղեկատվական հեղափոխության ընձեռած հնարավորություններից օգտվելու ձանապարհին: Այս տեսանկյունից կարևորվում է Հայաստանում գոյություն ունեցող սոցիալական ու տեխնոլոգիական կարողությունների միավորումը՝ տեղեկատվական և հեռահաղողակցային տեխնոլոգիաների (ՏՀՏ) ներուժային առավելություններից օգուտներ ստանալու համար:

Հայաստանի տեղեկատվական ենթակառուցվածքի ուսումնասիրությամբ բացահայտվել են հետևյալ հիմնախնդիրները:

- ՏՀՏ վրա կատարվող ծախսերի ցածր մակարդակը,
- Էլեկտրոնային կառավարության ծառայությունների թերզարգացածությունը, համացանցի գնային զամբյուղի մեջ լինելը,
- համացանցային գործարարության թերզարգացումը,
- բնակչության մեկ շնչին բաժին ընկնող միջազգային համացանցի թողունակության ցածր մակարդակը,
- Հայաստանի ցանցային պատրաստվածության ցածր մակարդակը:

Թվարկված հիմնախնդիրներն, ինչպես նշեցինք, էական սոցիալական ու տեխնոլոգիական բնույթի արգելք են դաշնում տեղեկատվական հեղափոխության ընձեռած հնարավորություններից օգտվելիս:

Ժամանակակից տնտեսությունում գիտելիքը նոր արժեք է, իսկ տեղեկատվական տեխնոլոգիան այն գործիքը, որն օգտագործվում է հիմնականում գիտելիք փոխանցելու, տարածելու և կիրառելու նպատակով։ Որպես հետևանք՝ տեխնոլոգիայի մատչելիությունը և հնարավորությունները դառնում են ամբողջ աշխարհում մարդկանց և համայնքների թվի մեծացնան՝ տնտեսության կենսունակության բանալիները։ Բիլ Գեյթսը նկատել է. «Հատկապես այն, թե դուք ինչպես եք հավաքում, կազմակերպում և օգտագործում տեղեկատվությունը, կանխորոշում է՝ կիսալթեք, թե կապտվեք»¹։

Ωραρισμένη ημέρα της Αγίας Παρούσας στην Εκκλησία της Αγίας Σοφίας στην Κωνσταντινούπολη, οι πιστοί από την Ελλάδα και την Ευρώπη μεταβαίνουν στην Αγία Σοφία για να παρακαλήσουν την Αγία Παρούσα για την επιτυχία της Ελληνικής Δημοκρατίας.

Տեղեկատվական ենթակառուցվածքի զարգացումը գիտելիքահենք տնտեսության համատեքստում ավելին է, քան նոր ու հին S&S տարածումը: Արդյունավետ զարգացումը կարող է հիմնված լինել սոցիալական և տեխնո-լոգիական կարողությունների միավորման վրա: Հյաստանի նման թույլ զարգացած երկրները հանդիպել են հսկայական ռիսկերի, քանի որ S&S ոլորտում նորաստեղծությունների առավելությունների ձեռքբերման համար պահանջվող բավարար տնտեսական ու սոցիալական կարողություններ չունեն: Այս առումով, անհրաժեշտ է միավորել առկա հնարավորությունները ներուժային առավելություններից օգուտներ ստանալու նպատակով: Դա հատկապես ընդգծվում է այն իմաստով, որ այդ տեխնոլոգիաները հնարավոր են դարձնում գիտելիք ձեռք բերելու, ստեղծելու մեթոդների նորաստեղծությունները՝ զարգացման առանձնահատուկ հիմնախնդիրները լուծելու տեսանկյունից:

Հայաստանի զարգացման համատեքստում SCS ներուժի առնչությամբ կարելի է առանձնացնել հետևյալը.

- տեղեկատվական և հեռահաղորդակցային տեխնոլոգիաները կարող են գործադրվել որպես զարգացման գործիքներ, սակայն դրանց արդյունաբետ օգտագործումը պահանջում է հանապատասխան ներդրումներ երկրի սոցիալական ու տեխնոլոգիական կարողությունների միավորման նպատակով,
 - թեև ներքին արդյունքը կարող է ներդրում ունենալ զարգացման նպատակներում, այդուհանդեռձ, ավելի մեծ հետհատուցներ կարող են ստացվել այդ տեխնոլոգիաների կարողությունների օգտագործման ներդրումներից,
 - ներդրումների արդյունավետությունն ավելի մեծ է, եթե դրանք կատարվում են միաժամանակ, հակառակ պարզաբանված սոցիալական կարողություններում ներդրումները պետք է դառնան գերակայություն,
 - պահանջվում է պետական ու մասնավոր հատվածների և, ընդհանուր առմամբ, հասարակության բարձր մակարդակի գործընկերություն՝ համակարգումը, ներդրումների հավաքագրումն ու սոցիալական հիմնախնդիրներով հասգեավորելու համար:

Στην Κατεύθυνση της Αριθμητικής Επίλογος στην Επίκαιο Σχολή Επαγγελματικής Καριέρας, η παραπάνω παραγγελία αποτελεί μέρος της επίδοσης της ομάδας στην Επίλογο.

¹ Ааéон А., Аеcí аn нí нéй ðí нòüb ì нòеè,] .. ЎЕÑ] 1-ї ðáññ, 2001, н. 23.

Զանկյալ օգտագործման միջոցով: Առանց նոր ունակությունների, այլ սարքավորումներում ներդրումների ու կազմակերպական փոփոխությունների, այդ տեխնոլոգիաների ներուժը չի կարող իրացվել: Այսինքն՝ հարկ է ուշադրությունը սևերել SCS օգտագործման և որոշումների ընդունման փոխլրացնող կողմերի վրա: Ընդ որում, Հայաստանի SCS ռազմավարությանն առնչվող որոշումները չեն կարող կտրված լինել միշագգային զարգացումներից:

Նորաստեղծական և տեխնոլոգիական փոփոխության ուսումնասիրությունները ցույց են տալիս հետևյալը.

- հաջողությունը կախված է տեխնոլոգիական ու սոցիալական ենթակառուցվածքում շարունակական ներդրումներից,
- կազմակերպական փոփոխությունն ու ձկունությունը պայմանավորված են ուսումնառությամբ, որն էական է նոր SCS կիրառություններն արդյունավետ օգտագործելու համար,
- «համր» գիտելիքը (կամ տեղական) զարգացնելու կարողությունները նույնքան կարևոր են, որքան «թվային» տեղեկատվությունը կուտակելու նոր տեխնիկան,
- ինչպես տեղեկատվական և հեռահաղորդակցային, այնպես էլ նոր տեխնոլոգիաների ստեղծումն ու տարածումը երբեք հարթ ու անխոչնդու չեն ընթացել:

Հայաստանը, անցումային տնտեսությամբ մի շարք երկրների նման, այնքան էլ լավ դիրք չունի տեղեկատվական և հեռահաղորդակցային տեխնոլոգիաներն իր զարգացման նպատակներին ծառայեցնելու համար. ուժեղ ու թույլ կողմերը, ըստ ենթակառուցվածքի, փորձի, հմտությունների և գիտելիքի ցուցանիշների, տարբեր աստիճանի են: Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ նկատելի ծերքերումներ չկան ենթակառուցվածքի գործիքների լայն տարածման առումով, հետևաբար՝ SCS արդյունավետ զարգացման պատկերը հուսադրող չէ: Այդուհանդերձ, Հայաստանն ունի տեխնոլոգիական ու սոցիալական կարողությունների որոշակի հենք ազգային տեղեկատվական ենթակառուցվածքի կառուցման համար: Միաժամանակ, դժվար է ակնկալել, որ SCS ռազմավարությունը հիմնովին կվերացնի աղքատությունը, որի հաղթահարման նպատակով դեռևս 2003 թ. <<Կառավարությունը գործողության մեջ է դրել աղքատության հաղթահարման ռազմավարությունը: Այս առումով, առկա է որոշակի ռիսկ, որ SCS կիրառություններում նոր քաղաքականությունը կարող է օտարման նոր ուժեր վեր հանել: Որոշ մարդիկ դուրս կմղվեն, իսկ մյուսները կորակագրկվեն, քանի որ ռեսուրսները չեն կարող մեծացվել՝ բոլորի վերապատրաստման ու ամբողջ կյանքում ուսումնառության հնարավորություններ ստեղծելու նպատակով: Հետևաբար՝ գիտելիքի հասարակության կառուցման տեխնոլոգիական միջավայրի ստեղծումը կարող է ներառել տեղեկատվական ենթակառուցվածքի հիմքերի զարգացում և այնպիսի պայմանների ստեղծում, որը կնպաստի ընտրված ոլորտներում սոցիալական կարողությունների կուտակմանը:

Տեղեկատվական ենթակառուցվածքից բացի, նաև SCS արտադրանքում ու ծառայություններում ներդրումները կարող են աստիճանաբար ապահովել այն միջավայրը, որում հետհատույցները, այլընտրանքային ներդրումների համեմատությամբ, կլինեն ավելի մրցունակ:

Տեղեկատվական ենթակառուցվածքում ներդրումները պահանջում են զուգահեռաբար ներդրումներ կատարել սոցիալական կարողություններում՝ ստեղծելու հմատիսուցիոնալ և սոցիալական ենթակառուցվածք, ներառյալ՝

Կրթությունը և տեխնիկական գիտելիքը, ինչպես նաև քաղաքական, տնտեսական, մշակութային ու սոցիալական հաստատությունները: Գիտելիքի հասարակության ձևավորման գործընթացում, ինչպես նաև դրա առկայության պայմաններում այդ ենթակառուցվածքը պետք է շարունակաբար փոփոխվի՝ ներառելով նոր մոտեցումներ կրթությանը, նոր աշխատատեղերին, մշակութի դրսնորման նոր եղանակներին (մշակութային կապիտալի ձևավորմանը), սոցիալական նոր ցանցերի կազմավորմանը (սոցիալական կապիտալի ստեղծմանը) և շուկայական հարաբերություններում փոփոխություններին: Սոցիալական կարողությունների զարգացման համար պահանջվում է հասկանալ երկրի թույլ և ուժեղ կողմերն այն առանցքային ոլորտներում, որոնք պետք է միավորվեն հնարավոր դարձնելով գիտելիքահենք զարգացումը:

Տեղեկատվական Ենթակառուցվածքի զարգացման նպատակով նախատեսվող ներդրումների չափերը որոշելիս հարկ կլինի առաջնորդվել այդ ոլորտում զարգացած երկրների ձեռքբերումներով։ Առաջնահերթ կարող է համարվել. ա) դեռևս հեռախոս չունեցող բոլոր տնային տնտեսություններին հեռախոսագիրով ապահովումը, բ) հատուկ միջոցառումների օգնությամբ (համացանցային զամբյուղի գնի նվազեցում, թվային գրագիտության ընդհանուր մակարդակի բարձրացում և այլն) համացանցային ներթափանցման մակարդակի բարձրացումը, գ) առաջիկա 2-3 տարիներին յուրաքանչյուր դպրոցականին համակարգչով ապահովումը, դ) բնակչության մեջ մասի, հատկապես երիտասարդության շրջանում նոր S&S մշակույթի ձևավորումը (որպես մարմնավորված վիճակի մշակութային կապիտալ)։

Աշխարհի 52 երկներում Computer Industry Almanac Incorporated (CIA)² ընկերության անցկացրած հետազոտության արդյունքները հանգեցրել են այսպիսի եղակացությունների:

- բնակչության մեկ շնչին բաժին ընկնող համախառն ներքին արդյունքի և համացանցի տարածվածության միջև գոյություն ունի դրական սերտ կապ,
 - համացանցի տարածումը խստ սահմանափակված է գոյություն ունեցող ստացիոնար հեռախոսային ցանցով (բջջային հեռախոսների ցանցի ընդլայնումը նշանակալի ազդեցություն չունի),
 - շատ մեծ նշանակություն ունեն համացանցին միանալու պետական ծրագրերը, որոնց շնորհիկ օգտագործողների թվաքանակը մեծանում է տասնյակ տոկոսներով,
 - երկրի բնակչության անգերենի խմացությունը ևս նպաստում է համացանցի տարածմանը:

Կարևորելով համացանցի դերը գիտելիքահենք տնտեսությունում՝ հարկ է նշել, որ փոքրաթիվ չեն այն օգտագործողները՝ հատկապես երիտասարդ տարիքի, որոնց նպատակը ոչ թե գիտելիք և տեղեկություններ ծնոթ բերելն է, այլ զվարճանալը: «Դրա համար էլ համացանցը կարող է որպես գործիք ծառայել ինչպես գիտելիքի հասարակության կառուցման համար, այնպես էլ լարիրինթոս դաշնալ, որը դանդաղ, սակայն հաստատուն ձևով կտանի զվարճությունների հասարակության ափերը կամ անդունդ»³: Հետևաբար՝ այս պարագայում առաջնային է դաշնում ՀՀ մարդասիր «Քվային մշակություն» սերմանումը ընակչության և, հատկապես, պատասխների ու երիտասարդների շրջանում:

² See Yéi i Í Í è-áñéay Óáí ðéy í à i ðí áá XXI ááéé-7: Áéí ááéüí àý yéi i Í èéà /i i à ðáá. P. Í níí i áá è áð/, L., „PédenÓ”, 2003, t. 186-194;

³ È l'àuàñòàì cí àì èÿ, PÍ ÅÑÊÍ, 2005, n. 57.

Տեղեկատվական և հեռահաղորդակցային տեխնոլոգիաները գիտելիքահենք տնտեսության տեխնոլոգիական հիմքն են և վերջին տարիներին դիտվում են որպես տնտեսական աճ և կայուն զարգացում երաշխավորող արդյունավետ լծակներ: Տեղեկատվական և հեռահաղորդակցային տեխնոլոգիաները, կիրառման համեմատաբար ցածր արժեքով, տարածություն հաղարարելու ունակությամբ, տեղեկություններ և գիտելիք փոխանցելու հեղակոխություն են առաջացրել ամբողջ աշխարհում: Այս առումով, առանձնահատուկ կարևորություն ունի այդ տեխնոլոգիաների մատչելիության ապահովումը հասարակության բոլոր խավերի համար, այսինքն՝ տեղեկատվական հասարակության կառուցումը:

Մի շարք ուսումնասիրություններ ցույց են տվել, որ SCS և արտադրանքը, և կիրառումը նպաստել են տնտեսական աճին: SCS ոլորտի արտադրանք թողարկող հատվածները գրանցել են տեխնոլոգիական խոշոր առաջնաբաց՝ ընդհանուր գործնային արտադրողականության առումով մեծ օգուտներ ապահովելով տնտեսության մակարդակում: Այսպես՝ փորձառական հետազոտության արդյունքում հաստատվել է տեղեկատվության և գիտելիքի հոսքի մեծացման հանգամանքը:

Քանի որ տեղեկատվական և հեռահաղորդակցային տեխնոլոգիաները հնարավորություն են ընծեռում տեղեկատվությունը փոխանցելու համեմատաբար ոչ թանկ և արդյունավետ ձևով, ապա, ըստ այդմ, նվազում են տնտեսական գործարքներում մասնակցության անորոշությունն ու տրանսակցիոն ծախսերը, ինչն էլ նպաստում է գործարքների ծավալի աճին՝ ապահովելով բարձր մակարդակի թողարկում և արտադրողականություն: Ավելին, տեղեկատվության ընդլայնմանը զուգահեռ, համապատասխան տեխնոլոգիան կարող է ավելի հեշտ ծեռք բերվել՝ կրկին հիմք ստեղծելով նորաստեղծության և արտադրողականության բարձրացման համար:

Տեղեկատվական և հեռահաղորդակցային տեխնոլոգիաների օգնությամբ հաղթահարվում են աշխարհագրական սահմանները: Միջազգային առևտորի մասնակիցները տեղեկատվությունը տարածելու հնարավորություն ունեն, կարող են մեծացնել մրցակցությունն ազգային սահմաններից դուրս, ինչը հանգեցնում է ավելի արդյունավետ համընդգրկուն շուկայական միջավայրի: Արտադրական գործընթացները կարող են դրսի արդյուրներից սնվել՝ հիմնված համեմատական առավելության վրա, որը հանգեցնում է հետագա համընդհանրական ծեռքբերումների: Շուկայի մատչելիությունն ու ընդգրկումը նույնական միտված են ընդլայնվելու՝ համաշխարհային առաջարկի շղաթերի մատչելիությունը մեծացնելուն զուգահեռ:

Տեղեկատվության հոսքի մեծացման հետ միասին, SCS ունակությունը և կիրառման միտումը հանրային ծառայությունների ապահովման մեծ թափանցիկության, հաշվետվողականության և մատչելիության հնարավորություն են տալիս: Ի լրումն այս ամենի, հասարակությունը տեղեկություններ է ստանում իր իրավունքների, քաղաքական և տնտեսական զարգացման գործընթացների վերաբերյալ:

SCS ենթակառուցվածքի մակարդակը ոչ միայն արտադրողների, սպառողների և կառավարության գործունեությանն է առնչվում, այլև ներգործում է անհատների աշխատանքի, գիտելիք ծեռք բերելու և հաղորդակցվելու ուղիների վրա: Եթե գիտելիքը դաշնա մրցունակության կարևոր տարր, տեղեկատվական և հեռահաղորդակցային տեխնոլոգիաները կնվազեցնեն գործարքային ծախսերը, ժամանակի ու տարածության արգելքները: Դրանց կիրա-

ռումը հնարավոր կդարձնի սովորական ապրանքների ու ծառայությունների գանգվածային արտադրությունը՝ փոքրացնելով արտադրության ավանդական սակավ գործուներից կախվածությունը:

Տեղեկատվական տեխնոլոգիաները գիտելիքահենք տնտեսության կարևորությունը բաղադրիչն են: Ընդ որում, խոսքն այնքան արդյունաբերության ճյուղին չի վերաբերում, որքան գործունեության մյուս բնագավառներին:

Տնտեսությունով մեկ ՏՀՏ ներթափանցման բարձր աստիճանը պայմանավորված է տեղեկատվական ենթակառուցվածքի մակարդակով: Դրա արդյունավետ կիրառումը օգնում է գիտելիքի հեռափոխությունից օգնություն: Այդ առումով, Alcoa կորպորացիայի նախագահ Փոլ Օ՛Նիլը նկատել է. «Տեղեկատվական տեխնոլոգիան են չեմ դիտարկում որպես ինքնուրույն արժեք: Բայց այն ստեղծում է մեծ հնարավորություններ: Եվ ի՞նչն է, թերևս, ամենակարևորը. ստիպում է կրկին ու կրկին կատարել հարցադրում՝ ինչո՞ւ, ինչո՞ւ, ինչո՞ւ»⁴:

Համացանցային հնարավորությունները գործարարության ոլորտում օգտագործվում են ոչ միայն առանձին ընկերությունների կողմից, այլև դրանք, ընդհանուր առանձին, կարևորվում են երկրի տնտեսական զարգացման ինտենսիվացման տեսանկյունից: Առանձնահատուկ նշանակություն ունի հատկապես լայնաշերտ կապուղին, որի նախքան մեծացումը և կիրառության ընդլայնումը հիմնովին փոխում են տնտեսական գործունեության բնույթը: Դա լայն հնարավորություններ է ստեղծում գործարարության նոր տեսակների զարգացման, տեղեկատվության և գիտելիքի որոնման ու ձեռքբերման արագության և արդյունավետության մեծացման առումով, նպաստում է գործարարության՝ առավել գիտելիքահենք դառնալուն:

Տեղեկատվական հասարակության ծևավորման պայմաններում էլեկտրոնային կառավարության կարևոր խնդիրների շարքում հարկ է առանձնացնել այնպիսի բաղադրիչներ, ինչպիսին են՝ համաշխարհային, ազգային, տեղական տեղեկատվական ռեսուրսների նկատմամբ հավասար իրավունքների և նախքենական ապահովումը, անհրաժեշտ տեղեկատվության և էլեկտրոնային ծառայությունների տրամադրումը, էլեկտրոնային պետական գնումների իրականացումը, համացանցային տնտեսության ծևավորմանն աջակցումը, էլեկտրոնային գործարարության հիմնական սուբյեկտների միջև փոխհարաբերությունների կարգավորումը, հեռահար ֆիսկալ գործառույթների և հարկային վերահսկողության իրականացումը, աշխատանքի տեղավորման վերաբերյալ հեռահար խորհրդատվության տրամադրումը, համալիր տեղեկատվական անվտանգության ապահովումը և այլն⁵:

Հյայատանում գիտելիքահենք հասարակության տնտեսության կառուցման ձանապարհին մեծ հիմնախնդիր էր համացանցի նախքենական գաղտնաբառը լուրջ խոչընդոտ էր երկրի տեղեկատվական ենթակառուցվածքի զարգացման համար: Վերջին 10 տարիներին էական առաջընթաց է արձանագրվել: Այսպես՝ ըստ Internetworldstats-ի, 2000 թ. համացանցային ներթափանցումը կազմել է շուրջ 10%, իսկ 2012-ին՝ ավելի քան 60%⁶:

⁴ Անդրեաս Անդրեաս, Հայատական գործարարության առաջնային գործունեությունները, 2001, էջ 304.

⁵ Տես Յովան Շահումյան, Հայատական գործարարության առաջնային գործունեությունները, 2001, էջ 164-186:

⁶ Տես <http://www.internetworldstats.com/stats3.htm#asia>

Էլեկտրոնային կառավարության հայեցակարգի իրացման անհրաժեշտությունը առաջադրում է հետևյալ պահանջները.

- Կառավարության բացություն երկրի քաղաքացիների և արտասահմանցիների համար,
- ընդունվող որոշումների իրականացման օպերատիվության և արդյունավետության մակարդակի բարձրացում,
- պետական ոլորտի ղեկավար աշխատակազմի պահպանման ծախսերի նվազեցում և այդ ոլորտի ծառայողների արտադրողականության մեծացում,
- Կառավարական կառույցներում կոռուպցիայի դեմ պայքար և այլն:

Գիտելիքահենք տնտեսության հիմնայուներից մեկը՝ տեղեկատվական շարժուն ենթակառուցվածքը, ենթադրում է լայնաշերտ կապուղու տեխնոլոգիաների մատչելիություն: Գիտելիքահենք տնտեսության համատեքստում դիտարկումն ապահովում է այն գործոնների շրջանակը, որոնք ազդում են պահանջարկի վրա: Որպես տեղեկատվական ենթակառուցվածք՝ լայնաշերտ կապուղին գիտելիքահենք տնտեսության անհրաժեշտ քաղադրիչ է, քանի որ ամրացնում է մյուս հիմնայուները՝ ինստիտուտները, մարդկային կապիտալը և նորաստեղծությունը:

Գիտելիքահենք տնտեսությունում լայնաշերտ կապուղու միջոցով տվյալների փոխանցումը կարևոր արժեք է: Լայնաշերտ կապուղին՝ ա) հնարավորություն է տալիս ակնարթորեն կապ հաստատելու տնտեսության գործակալների հետ, բ) կարող է խթանել երկրի մրցունակ զարգացման այնպիսի հենքի ձևավորումը, ինչպիսիք են քայլատերները, գ) կարող է բարձրացնել հետազոտությունների արդյունավետության մակարդակը և դյուրին դարձնել համընդգրկուն շղթա մուտք գործելն ու արդյունավետ գործառությունը, դ) հնարավորություն է տալիս ավելի արդյունավետ կազմակերպելու հեռահար ուսուցումը, ե) կարող է օգտագործվել որպես նոր արտադրանքի և գործընթացի նորաստեղծության հիմք:

Լայնաշերտ կապուղու զարգացումը և դրա մատչելիությունն ընդգծվում են համացանցի ամենահասության ապահովման և, դրանով իսկ, գիտելիքահենք տնտեսության տեղեկատվական շարժուն ենթակառուցվածքի ստեղծման տեսանկյունից: Իսկ համացանցի ամենահասության ապահովումը փուլային գործընթաց է: Ընդ որում, դա, ինչպես նկատել են Ռոբերտ Փիփերը⁷ և այլք Cisco Systems-ից, ոչ թե 100-տոկոսանոց միացումն է, այլ ամենուր, ցանկացած ժամանակ քաղաքացիների մեծամասնության օգտվելու հնարավորությունը:

Այսպիսով՝ տեղեկատվական ազգային ենթակառուցվածքի զարգացման արագացումը պահանջում է այդ ուղղությամբ ներդրումների խթանման առանձնահատուկ միջոցառումների իրականացում: Այս համատեքստում առանձնանում է SCS-ի՝ որպես գիտելիքում ներդրումների կարևոր բաղադրիչի ծախսերի մեծացումը մինչև Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների տարածաշրջանային միջին մակարդակ ($\text{ՀՆԱ } 2\text{-}3\%$): Նկատի ունենալով ոլորտի նշանակությունը երկրի զարգացման գործում, ինչպես նաև դրանով պայմանավորված՝ մշտադիտարկման անհրաժեշտությունը, նպատակահարմար է SCS ներդրումները դիտարկել որպես մակրոտնտեսական ցուցանիշ ու վարել վիճակագրություն:

⁷ St'u The Global InformationTechnology Report 2008–2009, էջ 39:

Հարկ է նշել, որ ազգային տեղեկատվական ենթակառուցվածքի զարգացման արդյունավետությունը մեծապես պայմանավորված կլինի ՏՀՏ ազգային ռազմավարության միասնական հաճատեքստում՝ տեխնոլոգիական քաղաքականությամբ (նոր տեխնոլոգիաների ստեղծման խթանում), արդյունաբերական քաղաքականությամբ (կառուցվածքային փոփոխությունը խթանող, մրցունակությանն աջակցող արդյունաբերական կառուցվածքների ձևավորում), հեռահաղորդակցային քաղաքականությամբ (միացնող ենթակառուցվածքի ստեղծում և ձևավորում), լրատվաքաղաքականությամբ (էլեկտրոնային լրատվամիջոցի բովանդակության ապահովման շրջանակի որոշում): Ազգային տեղեկատվական ենթակառուցվածքի կառուցման առումով որպես հիմնական նպատակ կարող է հանարվել տեղեկատվական տեխնոլոգիայի ռեսուրսների մատչելիության ապահովումը:

ÅAÄEE ÅADÄÄI BT


I ðî ðâéò ð i ì r àóéå è áí áøí èì nâýçÿì ÁÁÝÓ,
äí éò ð ýéí r ì è-áñéèx r àóé, i ðî Ôáññí ð

I ðí áéái ú i'ñðöðráséy fæðet fæüritré eí Óriði aðeitíri eí Óðaðiððseðððu.- Á yí iðó áðdí í áí ðaçáeðeý eí Óriði aðeití í í úð ðaðið í eí aðeé ðaçáeðeðeå í aðeití í aðeüí í é eí Óriði aðeití í í é eí Óðaðiððseðððu æðcí áí í í áí aði aðeití í aðeý í áuða-áí í ðiði aðaðnñá ëþáí eí ñððaðið. Í aðeití í aðeüí aðy eí Óriði aðeití í -í aðy eí Óðaðiððseððða ýaðeyðony í áí eí eç í ní í á yéit í í í eðe, í ní í áaði í í eí í aðcí áí eýð, +ði ñí í ní áñðaðað ñí çáaí eþp, ðað-í ði ñððaðið áí eþp eí ýoðaðeðeáí í í ó i'ðeití áí aði eþp cí áí eé. Néa-áí áaðaðaðeüí í, í ðiði aðeití ú ðaçáeðeý ýðið eí Óðaðiððseðððu ýaðeyðony ñðuñðaðaði í úði aððuñði í í a iððe ðaðaðeðeáí eðe áí cí í aði ñððaðe, i'ðaðaðaðeáí í úði eí Óriði aðeití í í eí ðaðaðið eþp-oeðe. N ýðið e ði +eé çðaði eý í ní áaði í í aðaði í áuðaðeí áí eða ñí oeðaðeüí úði e ðaðið í eí aðe-ñððeðo ñí i'ñððaðið aðeý í í eð-á-í eý áuðaði a ði í ði ðaðiðið oðaðeüí úði i'ðaði ñððaðaði ËÉÐ.

GAGIK VARDANYAN

*Vice – Rector for Science and Foreign affairs,
Doctor in Economics, Professor*

The Issue of Constructing National Information Infrastructure.- In the era of developing information technologies the development of national information infrastructure is of vital importance for any country's general progress. The national information infrastructure is one of the foundations of economy, based on knowledge contributing to the creation, spread and efficient application of knowledge. Consequently, the development problems of this infrastructure turn to be essential barriers along the path of realizing opportunities presented by the information revolution. From this standpoint it is particularly important to consolidate social and technological aptitudes in order to derive benefit from potential advantages of ICT.



ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՊՏՀ տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական
համակարգերի ամբիոնի վարիչ,
տնտեսագիտության դրվագ, պրոֆեսոր

ԱԼՎԱՐԴ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՊՏՀ ֆինանսական հաշվառման ամբիոնի վարիչ,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

ԼԻԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՊՏՀ կառավարչական հաշվառման և առողջության ամբիոնի վարիչ,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

ԼԵԿՈՆ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀՊՏՀ ֆինանսական հաշվառման ամբիոնի ասխատենտ

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐՄԱՆ ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ՑԱՆՑԱՅԻՆ ՏՏՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ¹

ՀՀ-ում ցանցային տնտեսությունը կայացման առաջին քայլերն է կատարում: Թվային միջավայրը նոր հնարավորություններ է ստեղծում բիզնեսի կառավարման, մասնավորապես՝ կառավարչական հաշվառման բնագավառում առավել արդյունավետ գործունեություն վարելու առումով: Տնտեսավարման նոր տեխնոլոգիաներն առաջադրում են նոր խնդիրներ, որոնց լուծումը ժամանակի հրամայականն է, իսկ գոյություն ունեցողները կարող են լուծվել միայն նոր տեխնոլոգիաների միջոցով: Այդպիսի խնդիրներից է խոշոր առևտորային ցանցերում ապրանքային պաշարների առավել ճշգրիտ հաշվառման կազմակերպումը: Կարևոր է կատարել մեթոդաբանական վերլուծություն և ներկայացնել համապատասխան մոդել, որը կարող է գործել ցանցային միջավայրում:

Ֆինանսական հաշվառման ներդրմանը գործակեռ, ՀՀ-ում նոր որակական հատկանիշներ է ստանում հաշվապահական տեղեկատվությունը: Ներկայումս հաշվապահական հաշվառման հիմնարար մոտեցումները սահման-

¹ Հոդվածը պատրաստվել է ՀՊՏՀ 2013 թ. մերքին դրամաշնորհային ծրագրի շրջանակներում:

Վում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով: Սակայն այսկերպ հաշվապահական հաշվառման համակարգի ոչ բոլոր հիմնահարցերն են ստանում իրենց պատասխանները:

Ներկայիս տնտեսական զարգացումները առևտորի ոլորտում հանգեցրին մի շարք փոփոխությունների (խոշոր առևտորային ցանցերի ծևավորում, առևտորի բնագավառում հաշվառման մեքենայացում և այլն), որոնք իրենց հերթին նոր խնդիրներ են առաջադրում հաշվապահական հաշվառման համակարգին: Արհասարակ, ֆինանսական հաշվառման հիմնարար մոտեցումներից մեկն այն է, որ ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով կամ արժեքի չափման այլ տարբերակով, սակայն ոչ վաճառքի գներով: Կամ ուրիշ սկզբունքներ, որոնց համաձայն բացահայտվում են որոշակի ակտիվների հրական արժեքները, սակայն դա որպես հաշվառման հիմք չի ծառայում: Այլ խնդիր դարձավ տեղեկատվական համակարգերի մասնակի կամ բացարձակ միասնացումը հաշվապահական գործնթացներին:

Բացի այդ, առևտորի ոլորտում աստիճանաբար կանոնակարգվեցին գործարար փոխհարաբերությունները և կազմակերպման սկզբունքները: Եթե 15-20 տարի առաջ դժվար էր պատկերացնել առևտորի գործընթացն առանց սակարկման, ապա այսօր առավել դժվար է պատկերացնել առևտորի սրահ՝ առանց հստակ գնանշման: Փոխվեցին նաև ապրանքաշրջանառության կազմակերպման ձևերը. դրանք հնարավորինս տարանջատվեցին: Այս ամենի արդյունքում առևտորի ոլորտում ձևակորպեցին հաշվառման առանձնահատկությունները: Դրանցից ամենակարևորը ապրանքային հաշվառման երկշերտ բնույթն է: Առաջին հարթությամբ կիրառվում է ինքնարժեքի, իսկ մյուս հարթությամբ՝ վաճառքի գների սկզբունքը: Նշվածներից յուրաքանչյուրն ունի իրեն հասուլ գործառույթներ, և մեկը չի ստվերում մյուսի կարևորությունը:

Տնտեսության մեջ տեղեկատվական համակարգերի առաջին կիրառությունները եղել են հաշվապահական հաշվառման ոլորտում: Ներկայումս տեղեկատվության շրջանառության ձևերի զարգացումները խիստ անհրաժեշտ են հաշվապահական հաշվառման նոր որակի՝ տեղեկատվական-վերլուծական համակարգերի ստեղծմանը: Ժամանակակից պահանջները բավարոր տեղեկատվական համակարգը նախատեսված է ոչ միայն հաշվապահական տեղեկատվական հոսքերի պարզագույն մշակման և ներկայացման համար, այլև ներառում է տրամաբանական և գիտական բաղկացուցիչ, որը նպաստում է առավել արդյունավետ կառավարչական որոշումների ընդունմանը և կառավարչական հաշվառման հիմնախնդիրների լուծմանը:

Այսպես՝ հարկային և ֆինանսական հաշվառման տեսանկյունից արդյունավետ է ապրանքային հաշվառման վարումը ինքնարժեքի հարթությամբ, իսկ ըստ ներքին վերականգնության կամ կառավարչական հաշվառման կարևոր է նաև հաշվառումը վաճառքի գներով:

Հաճախ ապրանքային հաշվառումը վաճառքի գներով կոչվում է մարդախան հաշվառման մեթոդ: Մանրածախ բնորոշումը պատահական չէ, քանի որ այս մեթոդը լավագույն կիրառվում է մանրածախ ապրանքաշրջանառության ոլորտում:

Մանրածախ մեթոդով հաշվառումն այնպիսի հաշվապահական գործնթացների, գրանցումների, հաշվարկների և հաշվետվությունների համակարգված անբողջություն է, որի հիմքում ապրանքային մնացորդի և շրջանառությունը վաճառքի գներով հաշվառելու սկզբունքն է:

Առևտրի բնագավառում տնտեսավարող կազմակերպությունների գործունեությունը պայմանականորեն կարելի է տարանջատել եթեք ուղղությունների՝ մեծածախ, մանրամեծածախ, մանրածախ:

Գործունեության յուրահատկություններն իրենց հերթին առաջացնում են հաշվառման տարբերակված մոտեցումներ: Մանրածախ և մանրամեծածախ ապրանքաշրջանառության դեպքում առավել նպատակահարմար է կիրառել հաշվառման մանրածախ մեթոդը:

Ինչպիսի մեթոդ էլ ընտրվի, նպատակը նույնն է՝ ապրանքային մնացորդի և շրջանառության արժեքային գնահատումը: Ապրանքային պաշարների հաշվապահական հաշվառման հիմնական խնդիրը հրացված կամ սպառված միավորների ինքնարժեքի որոշումն է: Ապրանքային պաշարների ինքնարժեքի որոշման մեթոդները սահմանված և նկարագրված են ՀՀՍ 2.«Պաշարներ» ստանդարտում: Իրացված պաշարների ինքնարժեքի որոշման բանաձևի ընտրությունը պայմանավորված է ապրանքային պաշարների փոխադարձ փոխարկելիության հանգամանքով: Փոխադարձ փոխարկելի պաշարների ինքնարժեքի որոշման համար կարող են կիրառվել ԱՄԱԵ և միջին կշռված մեթոդները: Ստանդարտը որոշակի դեպքերում թույլատրում է գործադրել նաև ինքնարժեքի որոշման մանրածախ և ստանդարտ ծախսումների մեթոդները: Վաճառված (իրացված կամ այլ ելքագրված) ապրանքների ինքնարժեքի որոշումը հավելագի մեթոդով ենթադրում է առևտրային հավելագի հարթերականորեն կայուն տոկոսադրույթի առկայություն:

Դա կարող է կիրառվել իրացման ժամանակ՝ ինքնարժեքի, շահույթի որոշման նպատակով, վաճառքի գներով արտահայտված ապրանքային մնացորդի նկատմամբ՝ մնացորդի ինքնարժեքի գնահատման համար, ինքնարժեքով արտահայտված ապրանքային մնացորդի նկատմամբ՝ մնացորդի գումարը վաճառքի գներով որոշելու նպատակով և այլն:

Սովորաբար այս մեթոդը կիրառվում է վաճառված ապրանքների ինքնարժեքի որոշման համար, հիմնականում օգտագործվում է առևտրային սրահներում՝ հաշվառման գործընթացների պարզեցման նպատակով: Առավել հեշտ է մի ժամանակաշրջանից մինչև մյուսը գրանցել ձեռքբերումները (արտահայտված վաճառքի գներով) և հաշվառել իրացումից հասույթը, քան թե որոշել վաճառված ապրանքների ինքնարժեքը:

Հավելագի մեթոդի կիրառությունը նպատակ ունի հեշտացնելու հաշվառման գործընթացը և որովես հիմք է ծառայում ապրանքային մնացորդի փաստացի գույքագրման արդյունքների և հաշվառված մնացորդի համադրմանը: Այս մեթոդի դեպքում պարտադիր չեն ապրանքային քարտում վերլուծական գրանցումները: Առևտրային հավելագի միջոց մանրածախ մեթոդը հիմնականում կիրառվում է փոքր բիզնեսում:

Խոշոր առևտրային ցանցերում ապրանքային պաշարների հաշվառումը առաջ է բերում այլ խնդիրներ, որոնց լուծման համար կարելի է օգտագործել մանրածախ մեթոդի առաջարկվող գործիքակազմը: Մանրամեծածախ առևտրի ոլորտում հաշվառման ներդրման սկզբունքների և ներքին վերահսկողության կանոնների ընտրության նպատակով կիրառելով մանրածախ մեթոդի գործիքակազմը՝ կստեղծվի այլընտրանքային հակակշիռ գոյություն ունեցող տեղեկատվական աղբյուրներին: Հիմնական տարբերությունն այն է, որ այդպիսի տեղեկատվական հոսքը կարելի է ձևավորել իրարից անկախ միավորներից:

Մանրամեծածախ առևտուի առանձնահատկություններով պայմանավորված՝ յուրահատուկ են նաև հաշվառման մոտեցումները։ Ուսումնասիրելով առևտուային հավելագնի տոկոսադրույթի կիրառության եղանակները հաշվառման տեսանկյունից՝ ակնհայտ է դաշնում, որ եթե նման տոկոսադրույթը լինի փոփոխական և դժվար որոշելի, նպատակահարմար չի լինի դրա կիրառությունը։ Հետևաբար՝ ցանկալի արդյունքի հասնելու համար պետք է վարել երկու տարբեր հաշվառումներ՝ մեկն ըստ ինքնարժեքի, մյուսն ըստ վաճառքի գնի։

Մինչև հաշվառման ներդրման և գործընթացների նկարագրությանն անցնելը, անդրադարձնանք այն խնդիրներին, որոնք հարկ է լուծել հաշվառման միջոցով։

Այսպես՝ մանրամեծածախ առևտուի ոլորտի զարգացումը հանգեցրեց առևտուային ցանցերի ծևակորմանը։ Ներկայումս գրեթե բոլոր վաճառակետերը առևտուային ցանցի միավորներ են, մի քան, որ աշխատանքի, մենքների, լոգիստիկայի, մարքեթինգի և վերահսկողության կազմակերպման առումով մի շարք առավելություններ է պահովում։ Հաշվապահական հաշվառման տեսանկյունից առավել կարևորություն ունի ներքին վերահսկողության ճիշտ կազմակերպումը։ Դա անհնար է իրականացնել առանց համապատասխան հաշվապահական տեղեկատվության, իսկ դրա աղբյուրը ապրանքային քարտերն են, ապրանքային մնացորդը՝ բնեղեն արտահայտությամբ և, իհարկե, արտահայտված վաճառքի գներով։ Գույքագրումների կամ ստուգումների արդյունքներն անփոփոխում են հենց փաստացի մնացորդների համադրությամբ։ ապրանքային մնացորդը՝ վաճառքի գներով։ Այսպիսով՝ հաշվառման արդյունքով ծևակորպած տեղեկատվությունը պետք է լինի այնպիսին, որ համարվի ներքին վերահսկողության տեղեկատվության հետ։ Բացի այդ, կարևոր է նաև ապրանքային միավորների հաշվառումն ըստ վաճառքի սահմանված գների, հակառակ դեպքում անհնար կլինի վերահսկել իրացման գործընթացը։

Առևտուային ցանցերի գործունեության առանձնահատկությունները հաշվի առնելով՝ հաշվապահական հաշվառման տեղեկատվությունը պետք է ընդգրկի.

- յուրաքանչյուր ապրանքային պաշարի (ապրանքի, արտադրանքի) վերլուծական հաշվառումն ըստ առանձին առևտուային սրահների,
- յուրաքանչյուր առևտուային սրահի ապրանքային մնացորդի հաշվառված մեծությունն ըստ վաճառքի գների,
- վաճառքի գներից տարբերվող գներով իրացման վերաբերյալ տեղեկություններ,
- դերիտորների, կրեդիտորների վերլուծական հաշվառում՝ ըստ առաջացման աղբյուրների (դերիտորների դեպքում՝ որ առևտուային սրահից է կատարվել իրացումը, կրեդիտորների դեպքում՝ ինչպիսի ապրանքների մատակարարումից), որ պահեստը կամ սրահն է եղել բեռնաթափման վայրը և այլն),
- վաճառքի կետերի (հաճախ դրանք նույնացվում են առևտուային սրահի առանձին դրամարկղային կետերի հետ, որտեղ կատարվում է վճարումը գնորդի կողմից՝ POS) դրամական միջոցների հաշվառում մուտքային մասով համադրելի վաճառված ապրանքների գումարների հետ, իսկ ելքային մասով՝ ըստ համապատասխան ուղղությունների և այլն։

Նման պահանջների բավարարմանը առավել բարձր մակարդակով կարելի է հասնել ավտոմատ համակարգերի ներդրմամբ, ֆինանսական հաշվառման պատշաճ կազմակերպմամբ, օպերատիվ հաշվառմամբ՝ իհմք ընդունելով հաշվառման մանրածախ մեթոդը:

Ինքնարժեքի որոշման նպատակով կիրառվող մանրածախ մեթոդի տարրերից օգտագործվում է առևտրային հավելագինը, իսկ առհասարակ ապրանքային հաշվառման նպատակով՝ մանրածախ հաշվառման ողջ գործիքակազմը:

Մանրածախ հաշվառման գործիքակազմի մեթոդական հիմքը ցուցանիշների սկզբնական և վերջնական մնացորդների միջև կապի արտացոլումն է ըստ այնպիսի հատկանիշներ կրող հաշվարկային նեծությունների, որոնք համադրելի են մեկ այլ ցուցանիշ հաշվարկելիս. ողջ գործիքակազմը միևնույն ցուցանիշի՝ երկու տարբեր ժամանակաշրջանների մնացորդների միջև թվաբանական հաշվարկային կապի արտացոլումն է:

Ապրանքային պաշարների մնացորդի հաշվառման մի քանի եղանակ կա.

- զուտ վերլուծական՝ անալիտիկ հաշվառում,
- քանակագումարային հաշվառում ըստ ինքնարժեքի (համադրական՝ սինթետիկ հաշվառում),
- քանակագումարային հաշվառում ըստ վաճառքի գների (հավելագնի մեթոդ):

Մենք առաջարկում ենք կիրառել զուտ գումարային մեթոդը:

Չուտ վերլուծական կամ քանակային հաշվառումը հատուկ է օպերատիվ հաշվառմանը, երբ ապրանքանյութական միավորների հաշվառումը վարվում է ըստ վերլուծական քարտերի՝ արտահայտված բնեղեն չափչներով:

Քանակագումարային հաշվառումը, ըստ ծևավորված փաստացի ինքնարժեքի, հատուկ է ֆինանսական հաշվառմանը, երբ միավորների հաշվապահական հաշվառումը տարվում է և վերլուծական, և համադրական հաշվների միջոցով:

Քանակագումարային հաշվառումն ըստ վաճառքի գների և զուտ գումարային հաշվառման եղանակները հատուկ են միայն հաշվառման մանրածախ մեթոդին, որը կիրառելի է միայն առևտրի բնագավառում:

Քանակագումարային՝ ըստ վաճառքի գների հաշվառման եղանակի հիմքը ապրանքային միավորների, ապրանքաշրջանառության և մնացորդի հաշվառումն է ոչ թե ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով, ինչպես ընդունված է ֆինանսական հաշվառման մեջ, կամ փաստացի ծևավորված արժեքով, ինչպես ընդունված է հարկային հաշվառման դեպքում, այլ հաշվառումն է՝ արտահայտված վաճառքի գներով:

Չուտ գումարայինի դեպքում հաշվառումն ապահովվում է միայն ապրանքային մնացորդի և շրջանառության գումարային մեծության միջոցով. այս պարագայում էական չէ վերլուծական հաշվառումը: Չուտ գումարային մնացորդի մեծությունը օգտագործվում է որպես հակակշիռ, թեև, ունենալով կիրառության սահմանափակ շրջանակ, այն վերահսկողական գործառույթ է հրականացնում տեղեկատվական հոսքերի նկատմամբ, կարող է կիրառվել ներքին ստուգումների ժամանակ:

Մանրածախ մեթոդի ներդրման նպատակահարմարությունը կախված է կառավարման կառուցվածքային բնույթից. եղանակի ներդրումը և հետագա վարումը կլինեն ամիմասո, եթե կազմակերպության գործունեությանը բնորոշ

չեղագուման անցկացում ներքին վերահսկողության նպատակով, կամ առևտրային սրահներն ունեն մեծ լիազորություններ՝ ինքնուրույն կարող են կազմակերպել առևտրային գործընթացը, հետևաբար՝ պետք է ապահովեն որոշակի շահութաբերության մակարդակ և այլն: Այսպիսով՝ անհրաժեշտ են այնպիսի հանգամանքներ, որոնց պարագայում մանրածախ հաշվառման մեթոդի ներդրումը կնպաստի աշխատանքների արդյունավետության բարձրացնան:

Առևտրային գործունեությունը ենթադրում է այնպիսի գործառնությունների առկայություն, որոնցում տեղի ունեցող փոփոխությունները կարող են դառնալ մանրածախ հաշվառման առարկա: Այսպես՝

- առևտրային սրահների, պահեստների, բազաների ապրանքային շղանառությունը,
- դրամական միջոցների հոսքերը,
- վաճառքների գծով դեբիտորական պարտքերը:

Տնտեսական գործունեության հաշվապահական հաշվառումն ընդգրկում է բազմաթիվ այլ տնտեսագիտական հասկացություններ՝ կազմակերպության ակտիվները և պասիվները, սակայն առևտրային սրահների դեպքում տնտեսական միջոցների կազմը ներառում է միայն վերը թվարկվածը:

Մանրածախ հաշվառման մեթոդի կիրառությունը ենթադրում է գործառնությունների դասակարգված գրանցումներ կատարելու ընթացակարգեր, որոնց տվյալները կօգտագործվեն հաշվարկային բանաձևերում, իսկ արդյունքում ստացված մեծությունները կծառայեն որպես փաստացի արդյունքների հետ համադրման լավագույն տարրերակ:

Մանրածախ հաշվառման մեջ առաջարկում ենք օգտագործել հետևյալ երեք՝ ապրանքային մնացորդի, դրամարկղի մնացորդի, դեբիտորական պարտքերի հիմնական հաշվարկային բանաձևերը:

Ապրանքային մնացորդի հաշվարկային բանաձևում օգտագործվող ցուցանիշներ

Ցուցանիշի կամ բանաձևի նկարագրություն	
Ապրանքատեսակի մնացորդի քանակ՝ բնեղեն չափիչով	Q
Տվյալ ամսաթվի դրությամբ որոշակի միավորի վաճառքի սահմանված գին	P
Ապրանքային մնացորդ՝ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	I ₀
Ապրանքային մնացորդի ավելացումներ՝ ձեռքբերումներ, մուտքեր	I ₊
Իրացման ժավալ և այլ ելքեր	I ₋
Ապրանքային մնացորդ՝ ժամանակաշրջանի վերջի դրությամբ	I ₁

$$\text{որտեղ՝ } I_0 = \sum Q * P, \quad I_1 = I_0 + I_+ - I_-.$$

Ներկայացնենք առևտրային սրահների մուտքային և ելքային գործառնություններն առավել մանրամասն.

Սուտքային գործառնություններ

	Ցուցանիշի կամ բանաձևի նկարագրություն	Հաշվարկային բանաձև
I ₊	Ապրանքային մնացորդի ավելացումներ՝ ծեռքբերումներ, մուտքեր	$I_+ = M_1 + M_2 + P_+ + D_+ + R_+$
M ₁	Չեղքբերումներ (հնարավոր է նաև վերադարձ գնորդից դեպքը, որը կարող ենք դիտարկել որպես ծեռքբերում)	ծեռքբերման ապրանքային քանակ x տվյալ պահին գործող վաճառքի գին
M ₂	Ներքին տեղաշարժեր	այլ սրահներից կամ պահեստից ապրանքային միավորների ստացման քանակ x տվյալ պահին գործող վաճառքի գին
P ₊	Վաճառքի գների թանկացում գների փոփոխություն սահմանելու դեպքում	(նոր գին – վաճառքի գին) x փոփոխվող գինը կրող ապրանքային մնացորդ՝ առ գների փոփոխության ամսաթվի դրույթամբ
D ₊	Բացասական զեղչեր վաճառքի գնից բարձր գնով իրացնելու դեպքում	(Վաճառված գին – Վաճառքի գին) x իրացված ապրանքների քանակ
R ₊	Գույքագրմամբ բացահայտված ավելցուկ	ավելցուկ ապրանքային միավորների քանակ x տվյալ պահին գործող վաճառքի գին

Ելքային գործառնություններ

	Ցուցանիշի կամ բանաձևի նկարագրություն	Հաշվարկային բանաձև
I.	Իրացման ծավալ և այլ ելքեր	$I = S + D + M_- + P_- + R_-$
S	Իրացված ապրանքների գումար (հնարավոր է նաև վերադարձ մատակարարին դեպքը, որը կարող ենք դիտարկել որպես իրացում) Իրացման ծավալը հաշվի առնելիս ցանկալի է անտեսել ԱԱՀ-ն	իրացման քանակ x վաճառված գին
D	Չեղչեր վաճառքի գնից ցածր գնով իրացնելու դեպքում	(Վաճառքի գին - Վաճառված գին) x իրացված ապրանքների քանակ
M-	Ներքին տեղաշարժեր	այլ սրահներ կամ պահեստ տեղափոխված ապրանքային միավորների քանակ x տվյալ պահին գործող վաճառքի գին
P-	Վաճառքի գների իջեցում վաճառքի գների փոփոխություն սահմանելու դեպքում	(նոր գին - վաճառքի գին) x փոփոխվող գինը կրող ապրանքային մնացորդ՝ առ գների փոփոխության ամսաթվի դրույթամբ
R-	Գույքագրմամբ բացահայտված պակասորդ	պակասորդ ապրանքային միավորների քանակ x տվյալ պահին գործող վաճառքի գին

Առևտրային կազմակերպության դրամարկղային գործառնությունների տարանջատումը, ըստ դրամական հոսքերի բնույթի, կատարվում է համաձայն ՀՀՍ 7.«Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին» ստանդարտի, որի պահանջների կատարումը պարտադիր է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման պարագայում: Եթե դրամական հոսքերի բնույթը ուսումնասիրներում առևտրային կետերի կամ սրահների մակարդակով, ապա այստեղ դրամական հոսքերի դասակարգումը առավել ընդգծված է արտահայտվում: Դրամական հոսքերը մուտքային մասով ձևավորվում են հաճախորդների կողմից վճարումների, դերհտորի մարումների միջոցով, իսկ ելքային մասով՝ ընթացիկ ծախսերի, մատակարարներին վճարումների կամ գլխավոր դրամարկղ գումարի հանձնման հաշվարկով:

Դրամարկղի մնացորդի հաշվարկային բանաձևում օգտագործվող ցուցանիշներ

Ցուցանիշ	Նկարագրություն
C_0	Դրամարկղի սկզբնական մնացորդ
C_{in}	Կանխիկ մուտքեր
C_{out}	Կանխիկ ելքեր
C_1	Դրամարկղի վերջնական մնացորդ
C_{in}	Կանխիկ մուտքեր
C_{inS}	Կանխիկ մուտքեր վաճառքից
C_{inD}	Կանխիկ մուտքեր դերհտորներից

$$\text{որտեղ՝ } C_1 = C_0 + C_{in} - C_{out}$$

$$C_{in} = C_{inS} + C_{inD}$$

Դրամարկղի ելքերը կարող են դասակարգվել ըստ նպատակային ուղղությունների, որոնց ընտրությունը կախված է որոշակի կազմակերպության վարած ներքին քաղաքականությունից. օրինակ՝ թույլատրվում է կատարել վճարումներ մատակարարներին, կատարել ընթացիկ ներքին ծախսեր, վճարել աշխատավարձ և այլն: Սակայն գլխավոր դրամարկղ գումարի հանձնումը հատուկ է բոլոր առևտրային կետերին, անկախ իրականացման ձևերից՝ ինկասացիոն, բանկային փոխանցմամբ և այլն:

Հարկ է հիշել, որ ներկայացված հաշվարկային բանաձևներում չեն ընդունակ անկանխիկ գործառնությունները: Իսկ առկայության դեպքում մոտեցումները նույն են:

Դերհտորական պարտքերի հաշվարկային բանաձևի կառուցման եղանակն այնպիսին է, ինչպիսին համադրական հաշվառման դեպքում է:

Վաճառքների գծով դերհտորական պարտքերի վերջնական մնացորդի հաշվարկային բանաձևը հետևյալն է՝

$$D_1 = D_0 + SD - C_{inD},$$

որտեղ՝ D_0 - ն վաճառքների գծով դերհտորական պարտքերի սկզբնական մնացորդն է,

S_D - ն՝ իրացման ծավալը՝ հետաձգված վճարումով,

C_{inD} - ն՝ վճարումները դերհտորներից,

D_1 - ը՝ վաճառքների գծով դերհտորական պարտքերի վերջնական մնացորդը:

Ներկայացված բանաձևերը որպես հիմք են ծառայում առևտրային սրահների ակտիվների գուտ գումարային մնացորդի որոշման համար: Այսպես՝ առաջարկվում է գումարել վերոհիշյալ երեք հաշվարկային բանաձևերը, որոնց հանրագումարը կներկայացնի «առևտրային ցանցի ակտիվները», այսինքն՝ կունենանք առևտրային սրահի միկրոհաշվեկշիռ, սակայն, բացի գուտ թվաբանական գումարից, այստեղ ի հայտ է գալիս գուտ գումարային մեթոդի առավելությունը, երբ ապրանքային մնացորդը որևէ ամսաթվի դրությամբ կարելի է ստանալ՝ արտահայտված ապրանքների վաճառքի գներով, սակայն չօգտագործելով իրացման ծավալի ցուցանիշը: Հենց սա է գուտ գումարային մեթոդով հաշվառման առավելությունը, քանի որ հակակշռում է հաշվապահական տեղեկատվական հոսքերին:

Չուտ գումարային մեթոդով մանրածախ հաշվառման բանաձևը կառուցվում է հետևյալ կերպ. եթե որպես հիմք ընդունենք ապրանքային մնացորդի, դրամական միջոցների և դեբիտորական պարտքերի հաշվարկային բանաձևերը՝

$$D_1 = D_0 + S_D - C_{inD}$$

$$C_1 = C_0 + C_{inS} + C_{inD} - C_{out}$$

$$I_1 = I_0 + M_1 + M_2 + P_+ + D_+ + R_+ - S - D - M_- - P_- - R_- ,$$

ապա դրանց հանրագումարը կներկայացնի առևտրային սրահի ակտիվների հանրագումարը՝

$$D_1 + C_1 + I_1 = D_0 + S_D - C_{inD} + C_0 + C_{inS} + C_{inD} - C_{out} + I_0 + M_1 + M_2 + P_+ + \\ + D_+ + R_+ - S - D - M_- - P_- - R_- :$$

Հաջորդ քայլի ընթացքում կրճատվում է նույն ցուցանիշը, որն ունի տարրեր թվաբանական նշաններ՝

$$D_1 + C_1 + I_1 = D_0 + S_D + C_0 + C_{inS} - C_{out} + I_0 + M_1 + M_2 + P_+ + D_+ + R_+ - S - \\ - D - M_- - P_- - R_- :$$

Հիմք ընդունել, որ իրացման փաստացի ծավալն արտահայտվում է համարժեք դրամական մուտքի կամ դեբիտորական պարտքերի աճի տեսքով, այսինքն՝

$$S = S_D + C_{inS}:$$

Տեղադրելով բանաձևերը՝ կստանանք.

$$D_1 + C_1 + I_1 = D_0 + S_D + C_0 + C_{inS} - C_{out} + I_0 + M_1 + M_2 + P_+ + D_+ + R_+ - S_D - \\ - C_{inS} - D - M_- - P_- - R_-$$

=>

$$D_1 + C_1 + I_1 = (D_0 + C_0 + I_0) + M_1 + (M_2 - M_-) - C_{out} (+P_+ - P_-) + (D_+ - D) + (R_+ - R_-):$$

Հաշվի առնելով, որ գործնականում առևտրային սրահներում դրամարկղի մնացորդը օրվա վերջին գրեթե միշտ կամ զրոյացվում է (մնացորդը հանձնվում է գլխավոր դրամարկղ), կամ նվազեցվում (մինչև սահմանված չափը), այդ մեծությունն անտեսվում է, հետևաբար՝ բանաձևը ստանում է հետևյալ տեսքը՝

$$D_1 + I_1 = (D_0 + I_0) + M_1 + (M_2 - M_-) - C_{out} + (P_+ - P_-) + (D_+ - D) + (R_+ - R_-):$$

Առևտրային սրահի ակտիվների մնացորդը կարելի է ներկայացնել ըստ Ժամանակաշրջանի՝ հետևյալ տրամաբանությամբ.

$D_0 + I_0$	ապրանքային և դեբիտորական պարտքերի մնացորդ՝ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ
M_1	ծեռքբերումներ՝ արտահայտված վաճառքի գներով
$M_2 - M_-$	սրահների միջև ներքին տեղաշարժերի գուտ գումար
$-C_{out}$	դրամարկուից ելքագրված գումարներ
$P_+ - P_-$	վերագնահատումների տարբերություն
$D_+ - D_-$	առևտրային գեղչերի տարբերություն
$R_+ - R_-$	գույքագրման արդյունքներ

Վերոհիշյալ գուտ գումարային բանաձեռ կարող է ենթարկվել որոշակի փոփոխությունների՝ պայմանավորված առևտրային ընկերության կառավարմամբ: Հիմք ընդունելով այն ենթադրությունը, որ առևտրային սրահներում հետաձգված վճարումնով իրացում գործնականում գրեթե չի հանդիպում, առաջարկվող հաշվարկային բանաձեռում կարելի է չներառել դեբիտորական պարտքի մնացորդի ցուցանիշը:

Այսպիսով՝ << առևտրային սրահների ապրանքային մնացորդի որոշման համար այլընտրանքային կարող է համարվել մեր առաջարկած հաշվարկային բանաձեռ, ըստ որի:

- մնացորդի որոշման ժամանակ չի օգտագործվում իրացումից հասույթի մեջությունը,
- մնացորդն արտահայտվում է վաճառքի գներով՝ գուտ գումարային տեսքով, ինչպես մանրածախ մեթոդի կիրառության ժամանակ,
- օգտագործվող տեղեկատվության շրջանակները հասանելի են:

Ամփոփելով նշենք, որ առաջարկվող հաշվարկային բանաձեռ ներքին վերահսկողական համակարգում այլընտրանք կամ հակակշիռ կարող է դրանով արդեն իսկ ծևավորված տեղեկատվական հոսքերին և հաշվետվություններին, հնարավորություն կընձեռի կրծատելու գույքագրման ընթացակարգերը, կնպաստի օգտագործման արդյունքներին էքսպրես գնահատական տակու հնարավորության օգտագործմանը, մանրածախ հաշվառման մեթոդով ստացված տեղեկատվության հավաստիության ստուգմանը և այլն:

ÅÄÐÄÅÍ ÑÄÐÉÈÑÞÍ

ÆĀÀÐÄ ÑÀÐÉÈÑÞÍ

Çàåâäöþùay èäÖåäðî é Öèí àí ñí áî áî ó÷åòà ÁÃÝÓ,
èáí äéäàò ýêí í í è÷åñéëò í àóé, áî öäí Ò

EEAÍ À ÁÐÈÁÍ ÐBÍ

Çääääöþüüý èäðääðí é öí ðääéäíš ÷ññéf áří ö÷áðà è áðäéëðà, èäíš äëääð
ýéñííí è-åññéëö í áðé, áří öðäí Ö

EEAAT | NAAEBS

AÑÑEÑÒÁÍ Ò ÉÀÔÅÄÐÛ ÓÈÍ ÀÍ ÑÍ ÅÍ ÅÍ Ó÷ÅÒÀ ÁÅÝÓ

VARDAN SARGSYAN

*Head of the Chair of Economic Information and Information Systems at ASUE,
Doctor in Economics, Professor*

ALVARD SARGSYAN

*Head of the Chair of Financial Accounting at ASUE,
PhD in Economics, Associate Professor*

LIANA GRIGORYAN

*Head of the Chair of Managerial Accounting and Audit at ASUE,
PhD in Economics, Associate Professor*

LEVON SAHAKYAN

Assistant at the Chair of Financial Accounting at ASUE

New Approaches to Inventory Accounting in the Trade Network System.


- The scope of accounting is wider than that of financial accounting, however, the adoption of IFRS does not mean that all the main issues of accounting may be addressed. Subject to the peculiarities of inventory accounting in the Trade network of the Republic of Armenia, as an addition to the accounting toolkit we offer methodological approaches, which will serve as an alternative to the existing accounting mechanisms and information sources. As a result of suggested methodological solution, a powerful toolkit is formed by using some tools of accounting retail method, through which a number of financial and management accounting problems are solved, including several internal supervision related problems as well. It is possible with the help of the suggested method for inventory accounting to essentially optimise the inventory and supervision functions within the Trade network of the Republic of Armenia.



ԱՇԽԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀՊՏՀ մարքեթինգի ամբիոնի հայցորդ

**ՀՀ ՏՏ ՈԼՈՐՏԻ ԲՆՈՐՈՇ ԳԾԵՐԸ,
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՒՄՆԵՐԸ ԵՎ
ԽԹԱՆՄԱՆ ՄՈԴԵԼԻ ԱՌԱՋԱՐԱԾ
ՀԻՄՆԱԽՆՆԴԻՐՆԵՐԸ**


ՀՀ ՏՏ ոլորտի խորբային վերլուծությունը ցույց է տալիս, որ բնորոշիչ ցուցանիշները հակասական են, մասնավորապես՝ ոլորտի աճի քանակական և որակական ցուցանիշների միջև առկա է զգալի շեղում: Մյուս կողմից՝ դրանք, համընդգրկուն ձյուղի քաստերներում ներգրավված երկրների արձանագրած ցուցանիշների համեմատությամբ, բավական համեստ են:



**Գծանկար 1. ՀՀ ՏՏ ոլորտի ֆիզիկական ծավալների աճի շարժնթացը
2003-2012 թթ.¹**

¹ Տես Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ (Ծրագրային ապահովում և ծառայություններ) – 2009, 2010, 2011, Հետազոտություն, «Ձերնարկությունների ինկուբատոր հիմնադրամ», Երևան, 2010, 2011, 2012:

Գծանկար 1-ից երևում է, որ SS ոլորտի ֆիզիկական ծավալները 2003-2012 թթ. ընկած ժամանակահատվածում տասնապատկվել են՝ 38.1 մլն ԱՄՆ դոլարից հասնելով 320.9 մլն ԱՄՆ դոլարի: Ոլորտը մեծացրել է իր մասնաբաժինն ինչպես արտահանման, այնպես էլ ՀՆԱ-ի մեջ: Մասնավորապես՝ Եթե 2003 թ. SS ոլորտին բաժին է ընկել ընդհանուր արտահանման 3.6%-ը², ապա 2010 թ. արդեն՝ 8.55%-ը³, ինչը պատկառելի ցուցանիշ է և առավելապես բնորոշ է զարգացած SS ոլորտով երկրներին (Ֆրանսիայում SS մասնաբաժինն արտահանման մեջ կազմում է 7.9%, իսկ Գերմանիայում՝ 12.7%)⁴: Եթե 2007 թ. SS ոլորտի մասնաբաժինը ՀՀ ՀՆԱ-ում կազմել է 0.96%, ապա 2012 թ. աճել է կազմելով ՀՆԱ 2.05%-ը⁵: Սա ևս փոքր ցուցանիշ չէ և հատուկ է SS արտադրանքի արտադրության ու արտահանման կողմնորոշված երկրներին (Հնդկաստանում SS ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ-ում նույն թվականին կազմել է 1.4%, Գերմանիայում՝ 1.3%)⁶: Մյուս կողմից՝ ՀՀ SS ոլորտի արտադրանքի ու արտահանման ծավալներն անհամեմատ (10-ից մինչև 65 անգամ) փոքր են SS ոլորտի արտադրանքին կողմնորոշված առաջատար երկրների և արտապատվիրման շուկայում առաջատարությանը նպատակադրության բոլոր երկրների նույն ցուցանիշներից: Դրա պատճառը դիտարկված ժամանակահատվածում ՀՀ ՀՆԱ փոքր ծավալներն են եղել և այն հանգամանքը, որ, չնայած ՀՀ անկմանը, SS ոլորտը շարունակել է զարգանալ: Միևնույն ժամանակ, չնայած թոշքաձև աճին, ՀՀ SS ոլորտի մասնաբաժինը համաշխարհային շուկայում աննշան է և կազմում է դրա 0.00013%-ը, ինչը խոսում է այն մասին, որ մեր ընկերությունները միջազգային շուկայում ճանաչում ունենալ չեն կարող, և դա այն դեպքում, եթե ոլորտի աճի քանակական ցուցանիշներն ավելի մեծ են եղել համընդգրկուն ճյուղի աճի տեմպերի ցուցանիշներից (գծանկար 2):



Գծանկար 2. ՀՀ SS ոլորտի և ՀՆԱ, ՀՀ SS ոլորտի և SS համընդգրկուն ճյուղի աճի համեմատական շարժմանը 2007-2012 թթ.

² Տես ՀՀ ԿԱՄՊԿ 2003-2004 թթ. մաքսային վիճակագրությունը:

³ Տես նոյն տեղը:


⁴ Տես IT Industry Dynamics In The World 2011, Gartner, New York, 2012:

⁵ Տես Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ (Ծրագրային ապահովում և ծառայություններ) – 2011, Հետազոտություն, «Զեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ», Երևան, 2012:

⁶ Տես նոյն տեղը:

Ուշագրավ է, որ SS ոլորտը մեր երկրի ամենամիջազգայնացված ճյուղերից է, որին հատուկ են միջազգային կապիտալով ընկերությունների մեջ թիվը և տեղական ընկերությունների՝ արտահանման կողմնորոշվածությունը:

Ըստ գծանկար 2-ի՝ ՀՀ SS ոլորտը ինչպես ՀՆԱ, այնպես էլ ճյուղի ընդհանրական աճի միջին ցուցանիշների համեմատությամբ ունեցել է ակնհայտ առաջանցիկ աճի տեմպեր: Ավելին, SS ոլորտն, ի տարրերություն ինչպես ՀՆԱ, այնպես էլ ճյուղի 2009 թվականին արձանագրած անկման, շարունակել է աճել: Այս առումով կարող ենք պնդել, որ, չնայած համընդգրկուն ճյուղում արձանագրած համեստ մասնաբաժնին, ՀՀ SS ոլորտը վերջին 10 տարիներին հանրապետության ամենադիմակ ոլորտներից է:



Գծանկար 3. 2008-2012 թթ. ՀՀ SS ոլորտի ընկերությունների ազգային պատկանելությունը՝ առաջային պատկանահանդիսական ընկերությունների հետ համապատասխան⁷


Գծանկար 3-ից երևում է, որ 2008-2012 թթ. ընկած ժամանակահատվածում ոլորտում գործունեություն ծավալած ընկերությունների 38%-ն արտասահմանյան կապիտալով է, ընդ որում, շուրջ 75%-ը՝ ամերիկյան և եվրոպական: Սա պայմանավորված է ՀՀ Կառավարության տվյալ ոլորտի հեռանկարյին կողմնորոշումներում հենց այս երկու հիմնական ուղղությունների գերակայությամբ, ինչպես նաև արտապատվիրման շուկային կողմնորոշվածությամբ: Ավելին, 2008-2012 թթ. վերլուծությունը ցույց է տվել, որ նշյալ ժամանակահատվածում ՀՀ-ում հիմնադրված 185 ընկերություններից 42-ը կամ 23%-ը եղել են ամերիկյան և եվրոպական (մոտավորապես 80/20 հարաբերակցությամբ)⁸: Պետք է նշել, որ տեղական և արտասահմանյան ընկերությունների մասնաբաժնները համախառն արտադրանքում ևս միևնույնը չեն և համամասնորեն չեն բաշխված (գծանկար 4):

Գծանկար 4-ից երևում է, որ 2008-2012 թթ. ընկած ժամանակահատվածում այս ոլորտի արտադրանքում արտասահմանյան ընկերությունների մասնաբաժննը տատանվել է 60%-ից 65%-ի սահմաններում, թեև դա ոլորտի ընկերությունների ընդհանուր թվի միայն 38%-ն է: Արտահանման ծավալների մոտ 70%-ը ևս բաժին է ընկնում արտասահմանյան ընկերություններին, ընդ որում, այն պայմաններում, երբ ներքին շուկայի պահանջարկի 47%-ը ևս սպասարկել են արտասահմանյան ընկերությունները: Ընկերությունների աշ-

⁷ Տես նոյն տեղը:

⁸ Տվյալը վերցված է ծեռնարկությունների գրանցման պետական ռեգիստրից:

Խատակիցների թվի վերլուծությունից էլ պարզ է դառնում, որ արտասահմանյան կապիտալով ընկերությունների աշխատակազմն ավելի մեծաթիվ է, քան հայրենականինը:



Գծանկար 4. 2008-2012 թթ. <<SS ոլորտի արտադրանքում տեղական և արտասահմանյան ընկերությունների ֆիզիկական ծավալները⁹

Այսպես՝ 2011 թվականի դրությամբ 6760 մասնագետներից տեղական ընկերություններում աշխատել են 3154-ը, իսկ արտասահմանյան ընկերություններում՝ 3606-ը¹⁰: Եվ եթե հաշվի առնենք, որ նոյն ժամանակահատվածում գործել են 174 տեղական և 107 արտասահմանյան ընկերություններ¹¹, ուրեմն արտասահմանյան ընկերություններում միջինում աշխատել է 34 մարդ, իսկ հայրենական ընկերություններում՝ 18 մարդ (մոտ 1.9 անգամ պակաս):

Հատկանշական է, որ ոլորտի եկամուտները բաշխված են ոչ հօգուտ հայրենական ընկերությունների: Այսպես՝ ոլորտի ընդամենը 38%-ը կազմող արտասահմանյան ընկերություններին բաժին է ընկել համախառն շահույթի 70%-ը¹²: Սա իր արտացոլումն է գտել նաև տեղական և արտասահմանյան կապիտալով ընկերությունների աշխատանքի արտադրողականության ցուցանիշում (2011 թ. կազմել է 32.000 ԱՄՆ դոլար՝ 2010 թ. համեմատությամբ աճելով 10.25%-ով)¹³: Թեպետ արտասահմանյան ընկերություններում աշխատողների թիվը 450-ով ավելի է, սակայն դրանցում մեկ աշխատակի արտադրողականությունը կազմում է տարեկան 34.500 ԱՄՆ դոլար (2011 թ. աճել է 6.5%-ով), իսկ հայրենական ընկերություններում՝ 29.500 ԱՄՆ դոլար (2011 թ. աճել է 14%-ով)¹⁴: Այս առումով պետք է նշել, որ <<SS ոլորտում մեկ աշխատակի արտադրողականությունը նկատելիորեն հետ է մնում ինչպես ճյուղի միջին ցուցանիշից (ըստ Gartner ընկերության գնահատման՝ մոտ

⁹ Տե՛ս Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ (Ծրագրային ապահովում և ծառայություններ) – 2011, Հետազոտություն, «Զեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ», Եր., 2012:

¹⁰ Տե՛ս նոյն տեղը:

¹¹ Տե՛ս նոյն տեղը:


¹² Տե՛ս նոյն տեղը:

¹³ Տե՛ս նոյն տեղը:

¹⁴ Տե՛ս նոյն տեղը:

60.000 ԱՄՆ դոլար¹⁵), այնպես էլ ճյուղի առաջատար ընկերությունների միջին ցուցանիշից (Forbes ընկերության 2012 թվականի վարկանիշն ունեցող 15 կազմակերպությունների արտադրողականությունը տատանվել է 440.000-ից 2.200.000 ԱՄՆ դոլարի սահմաններում)¹⁶:

Ինչպես արդեն նշվել է, ՀՀ ոլորտն ունի հստակ ընդգծված արտահանման կողմնորոշում: Մասնավորապես՝ 2008-2012 թթ. ընթացքում արտադրանքի միջին հաշվով 52%-ն արտահանվել է (գծանկար 5):



Գծանկար 5. 2008-2012 թթ. Ընթացքում ՀՀ ոլորտի արտադրանքի բաշխումը ներքին և արտաքին շուկաների միջև, արտահանման հիմնական շուկաները¹⁷

Գծանկար 5-ից երևում է, որ 2008-2012 թթ. ընկած ժամանակահատվածում արտահանման հիմնական գործընկերներ են Եղել ԱՄՆ-ը և Եվրոմիությունը, որոնց բաժին է ընկել համախառն արտահանման մոտ 84%-ը, որը կարելի է բացատրել երկու հանգամանքով: Առաջին՝ ոլորտի արտասահմանյան ընկերությունների մոտ 75%-ի կապիտալն ունի ամերիկյան կամ եվրոպական ծագում, երկրորդ՝ ՀՀ արտադրանքի հիմնական սպառման շուկաներն ու արտապատվիրման շուկայի առաջնային պատվիրատունները պատկանում են հենց ԱՄՆ-ի կամ Եվրոմիության ՀՀ քաստերներին:


Հայաստանում տվյալ ոլորտի ապրանքային կառուցվածքի հիմնական ուղղություններն են ինտերնետային ծառայությունները և ծրագրային ապահովման միջոցների, սարքերի արտադրությունն ու ՀՀ ոլորտի խորհրդատվական ծառայությունների մատուցումը, որը 2008-2012 թթ. ընթացքում բաշխվել է, միջին հաշվով, 23/77% հարաբերակցությամբ (գծանկար 6):

¹⁵ Տես www.gartner.com

¹⁶ Տես www.forbes.com

¹⁷ Տես Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ (Ծրագրային ապահովում և ծառայություններ) – 2011, Հետազոտություն, «Զեռնարկությունների իմկության հիմնադրամ», Եր., 2012:

Փաստորեն, եթե ծրագրային ապահովման միջոցների և սարքավորումների մոտ 77%-ն է արտահանվել, ապա SS խորհրդատվության ծառայությունների ու ինտերնետային ծառայությունների ընդամենը 32%-ը: Ուշագրավ է, որ սարքավորումների 100%-ն էլ արտահանվել է: Իսկ SS ոլորտում արտադրված սարքավորումների արտահանումը 2007-2010 թթ. ընկած ժամանակահատվածում կազմել է 12%-ից 32%-ը՝ տատանվելով 12.2 մլն դոլարից մինչև 19.8 մլն դոլարի սահմաններում: Սակայն, ինչպես երևում է գծանկարից, արտահանման հիմնական ուղղությունը հենց ծրագրային միջոցների արտադրությունն ու արտապատվիրումն է, վեր նախագծումն ու ծրագրավորումը և, որոշ չափով, ցանցային համակարգերի ու կապի մշակումը:



Գծանկար 6. 2008-2012 թթ. SS արտադրամքում տարեր հատկաների ֆիզիկական ծավալները¹⁸


Հատկանշական է, որ արտահանման կողմնորոշումներն էական ազդեցություն ունեն ՀՀ SS ընկերությունների մասնագիտացման կողմնորոշման առումով: Մասնավորապես՝ «Տնտեսություն և արժեքներ» ու «Ի Վի քոնսալտինգ» ընկերությունների աշխատանքի վերլուծության արդյունքներով պարզվել է, որ վերջին տարիների ընթացքում հայկական SS ընկերությունների մասնագիտացման հիմնական ուղղություններում առկա են որոշակի փոփոխություններ: 2011 թ. դրությամբ այստեղ ամենատարածված մասնագիտացումներն են ծրագրային ապահովման պատվերները և արտապատվիրումը, վեր նախագծումը և ծրագրավորումը, SS ծառայությունները և խորհրդատվությունը: Ուսումնասիրությունները ցույց են տվել նաև, որ թեև արտապատվիրումը շարունակում է մնալ հայրենական SS ընկերությունների հիմնական մասնագիտացումը, այնուամենայնիվ, աստիճանաբար անցում է կատարվել առավել բարձր հավելյալ արժեքով ծառայությունների մատուցմանը: Մասնավորապես՝ ավելացել է ճարտարագիտության, համակարգերի մշակման և գիտահետազոտական ծառայությունների ոլորտներում մասնագիտացող ընկերությունների թիվը (գծանկար 7):

Ըստ գծանկար 7-ի տվյալների՝ մեր հանրապետության ուսումնասիրվող ոլորտը 2008-2012 թթ. ընթացքում հստակ կողմնորոշված է եղել ցածր և միջին հավելյալ արժեք ապահովող տեխնոլոգիաների թողարկմանն ու առվարտական պատվերների կատարմանը:

Այսպես՝ բարձր հավելյալ արժեք ապահովող արտադրանքի (միկրոսխեմաների նախագծում և արտադրություն, տվյալների բազաների և համատեղ

¹⁸ Տես նոյն տեղը:

կապի (ամպերի) արտադրություն, վերլուծական ծրագրերի (հաշվապահական, ֆինանսական կամ բանկային) արտադրություն, հեռահաղորդակցության ծրագրային ապահովման միջոցների (մշակում) արտադրության բնագավառուն մասնագիտացված են եղել ընդհանուր կազմակերպությունների միայն 30%-ը, որոնք բոլորն էլ ամերիկյան կապիտալով ընկերություններ են:



Գծանկար 7. «ՀՀ ոլորտի ընկերությունների մասնագիտացման հիմնական ռոլորությունները 2012 թվականի դրությամբ»¹⁹

Ի դեպ, թեև միկրոսխեմաների նախագծման մեջ մասնագիտացել է «ՀՀ ոլորտի ընկերությունների միայն 3%-ից 4%-ը, սակայն դրանց բաժինը ոլորտի 2011 թ. հասույթի մոտ 14%-ն է կազմում: Ճիշտ է, «Տնտեսություն և արժեքներ» կենտրոնի գործունեության վերլուծությունը ցույց է տվել, որ մեր հանրապետությունում սկսել է դիրքավորվել նաև մորբայի լուծումների մշակման ուղղությունը, սակայն այստեղ դեռևս լուրջ արդյունքներ չեն գրանցվել:

Մեր երկրի տվյալ ոլորտի որակական աճի ոչ այնքան բարձր ցուցանիշները պայմանավորված են հիմնականում արտապատվիրման շուկայի ընկերությունների, արտասահմանյան ընկերությունների մասնաճյուղերի գործելանձով, որը միտված է փոքր բյուջեով մեծ արտադրողականության ապահովմանը, ինչը նվազեցնում է հայրենական արտադրողների շահութաբերությունը, քանի որ «ՀՀ-ին ՀՀ ոլորտի հասույթից քիչ արժեքը է բաժին հասնում. հիմնականում մասնաճյուղերի գործառնական ծախսերը: Այս ոլորտում հայրենական արտադրողների իմիջի բացակայությունը «ՀՀ Կառավարությանը դրուել է ոլորտի զարգացումը պլանավորել առևտորսինգային կենտրոնների հիմնմամբ և մասնաճյուղերի գործունեության խթանման մոդելի կիրառմաբ: Այս մասին են վկայում ոլորտին առնչվող երեք՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման», «Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հասարակության ձևավորման», «Հայաստանի Հանրապետությունում ռադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցման» հայեցակարգերի և դրանցում սահմանված նապատակների ու գործողությունների ծրագրերի խորքային վերլուծությունը և 2007-2012 թթ. ընկած


¹⁹ Տես նոյն տեղը:

Ժամանակահատվածում ՀՀ Կառավարության կողմից իրականացված ծրագրերի ուղղվածության ուսումնավիրությունը:

Թեև կիրառված մոդելը զգալի դեր է խաղացել 2003-2012 թթ. ընթացքում ոլորտի զարգացման և հատկապես 2008-2012 թթ. ժամանակահատվածում տնտեսական աճի և արտահանման գործում, սակայն ներկայումս իրեն սպառել է:

Այսպես՝ նույն մասնագիտացումների վերլուծությունից ակնհայտ է դաշնում, որ դրանք հարմարեցված չեն SS գլոբալ շուկայում ընթացող փոփոխություններին և գործեք չեն համապատասխանում առաջատար ընկերությունների կողմից վերջին երեք տարիների ընթացքում սահմանված առաջնահերթություններին (Վերլուծական ծրագրերի, մոբայլ տեխնոլոգիաների և դրանց լուծումների, ամաերի (SaaS, LaaS, PaaS), համատեղ աշխատանքի և փաստաթղթաշրջանառության համակարգերի, վիրտուալ համակարգերի, կորպորատիվ կառավարման ծրագրային ապահովման միջոցների, IT կառավարման ծրագրային ապահովման միջոցների, CRM ավտոմատացված համակարգերի լուծումների, ERP հավելվածների և ցանցային անվտանգության միջոցների արտադրություն): Դրանք միջնաժամկետում կարող են չհամապատասխանել նաև ուղղահայաց ճյուղերով առաջադրված նոր իրողությունների պահանջներին, որոնք ևս ենթադրում են հավելյալ բարձր արժեքի վրա հիմնված բարդ տեխնոլոգիաների և դրանց սպասարկման լուծումների մշակումները: Եվ, վերջապես, ինչպես ցույց տվեց գլոբալ ճյուղի վերլուծությունը, կա մտավախություն, որ միջնաժամկետում էական վերափոխումների կենթարկվի նաև արտապատվիրման շուկան կապված զարգացող երկրների քանատերների զարգացման տեմպերի արագացման և զարգացող երկրների ծախսերի մեծացման հետ: Նման պայմաններում հատկապես ցածր և միջին հավելյալ արժեք ակնկալող տեխնոլոգիաները պահանջարկ չեն ունենա, քանի որ դրանք SS ոլորտում հիմնական ծախսերը կատարող երկրների կառավարությունների կողմից պարզապես կգնվեն հենց իրենց երկրին պատկանող ընկերություններից, որոնք նույնպես աչքի են ընկնում ցածր աշխատուժի հիման վրա կառուցված զարգացման մոդելներով, սակայն, ի տարերություն ՀՀ SS ոլորտի ընկերությունների, ունեն մասշտարից հսկայական էֆեկտի հնարավորություն և ավելի զարգացած ընթակառուցվածքներ: Հաջորդ երեք տարիների ընթացքում գործնական բարձր չծեռնարկելու դեպքում ՀՀ SS ոլորտը կիայտնվի ներկայումս կիրառվող մոդելի «Ճուղակում», ինչն անխուսափելիորեն կիանգեցնի ոլորտի անկմանը, որոշակի ժամանակահատվածուվ առկա գործընթացներից հեռացմանը և ավելի կարճ ժամանակամիջոցում ավելի խոշորածավալ ներդրումների կատարման անհրաժեշտությանը: Նման իրավիճակ մեկ անգամ արդեն եղել է ՀՀ ադամանդագործության բնագավառում, երբ Կառավարության կողմից ադամանդի մշակման քանատերի ծևավորման ռազմավարությունը տապալվեց շուկայի նոր իրողություններով պայմանավորված ազդակներին ժամանակին չարձագանքելու պատճառով:

Ինչպես երևաց վերլուծությունից, ՀՀ SS ոլորտի զարգացման առկա մոդելը, ապահովելով ֆիզիկական ցուցանիշների զգալի աճ, չի կարողացել լուծել արդյունավետ զարգացման և համընդհանրական միտումների նկատմամբ դրա ձկունության մեծացման խնդիրները, ինչի հիմնական միջոցը ավելի բարձր հավելյալ արժեք ապահովող հատվածում մասնագիտացման խթանման նոր մոդելի ներդրումն է:



ԽԱՉԱՏՈՒՐ ՆԱԶԱՐԵԹՅԱՆ ՀՊՃՀ (Պոլիտեխնիկ) ասպիրանտ

ԱՄՊԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ցանցային տեխնոլոգիաների արդյունավետության հիմքում ընկած են հետևյալ հատկությունները.

1. Վերլուծվող տեղեկատվություն պարունակող համակարգիչների տեղակայման անկախություն,
2. Խսափանումների նվազագույն մակարդակ. ցանցի որևէ հատվածի խսափանման ժամանակ շարունակվում են հարցումների պատասխանները, և շարունակվում է տեղեկատվությունն այնքան ժամանակ, քանի դեռ գոյություն ունի դրա տրամադրման գրնե մեկ հնարավոր ձանապարհ,
3. ցանցի առանձին մասերի կենսունակություն. ցանցի առանձին մասերն աշխատում են միմյանցից անկախ, սակայն միևնույն տեղեկատվական տիրույթում,
4. Տվյալների փոխանցման մեջ արագություն, որը պայմանավորված է օգտագործվող սարքավորումների տեխնիկական բնութագրերով:

Ցանցային տեխնոլոգիաների արդյունավետությունը ներկայացվում է նաև հարցումներին արագ արձագանքելու հնարավորությամբ՝ փոխգործուն /ինտերակտիվ/ տարբերակ:

Համացանցն ավելի ու ավելի ակտիվորեն է օգտագործվում գործարարության ոլորտում տարբեր գործառություններ իրականացնելու համար: Բազմաթիվ մեծ ընկերություններ վաղուց են դիմում դրա օգնությանը՝ արդյունքում ծերթ բերելով զգալի առավելություններ նշանակից ընկերությունների նկատմամբ: Համացանցը կարող է օգտագործվել սպառողների հետ վիրտուալ հանդիպումների նպատակով: Այսպես օրինակ՝ IBM-ը ծանոթացնում է «Think»* ամսագրի նյութերին, տեղեկություններ տրամադրում կորպորացիայի գործունեության, արտադրանքի և նորությունների նպատակով:

* «Think» ամսագիրն առաջին անգամ տպագրվել է 1935-ին, որտեղ ներառված էին ինչպես տեխնոլոգիական, այնպես էլ համաշխարհային առևտություններ:

Համացանցը գովազդի, մարքեթինգի, ապրանքի իրացման և վաճառքից հետո հաճախորդների սպասարկման արդյունավետ միջոց է: Համընդգրկուն ցանցերը փոխարինում են հեռախոսին, ֆաքսին, արագ փոստին և այլ հաղորդակցման միջոցների, օգնում են ընկերություններին՝ գնորդների հետ հաստատելու անմիջական կապ, օպերատիվ տեղեկություններ ստանալու շուկայի տնտեսական իրավիճակի և սպառողական պահանջարկի կառուցվածքի փոփոխությունների մասին:

Տնտեսության մեջ ցանցային տեխնոլոգիաների օգտագործման արդյունավետության վրա մեծ ազդեցություն ունեն համընդգրկուն ցանցերի առանձնահատկությունները, որոնցից են.

- հաղորդակցության տիրույթը, որը սահմանափակված չէ ոչ ժամանակի, ոչ էլ տարածության մեջ,
- մուտքի հստակ սահմանված եղանակները,
- շուկայի լրիվ թափանցելիությունը. մրցակիցների պայմանները կարելի է ճշտել հաշված րոպեների ընթացքում,
- առցանց/online/ ծախսեր կատարող օգտագործողները,
- արդյունավետությունը հաճախորդի համար,
- հաճախորդներին խնդերի բաժանելու հնարավորությունը,
- օգտագործողների վարքագիր վիճակագրական վերլուծության հնարավորությունը,
- արդիականացված տեղեկատվության օպերատիվ փոխանցման հնարավորությունը,
- համակարգի գործառույթների ընդլայնման հնարավորությունը:

Ցանցային տեխնոլոգիաներ օգտագործող ընկերությունների կառավարիչները այնոք է կարողանան որոշել ցանցային սերվերների, տվյալների բազաների, կապուղիների և պահանջվող այլ ծախսերից ստացվող տնտեսական արդյունավետությունը: *Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման արդյունավետությունը տնտեսական գործունեության տարբեր ոլորտներում կարող է ներկայացվել տարբեր ցուցանիշներով:*

Ելեկտրոնային առևտուում տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման արդյունավետությունը ($E_{առ.}$) վեր սերվերում, վիրտուալ խանութի իրականացման օրինակով, հաշվարկվում է ապրանքի ձեռքբերման ուղղությամբ ակտիվ գործողությունների դիմած հաճախորդների ($Q_{առ.}$) և սերվերին դիմած ընդհանուր հաճախորդների (Q) հարաբերությամբ¹:

$$E_{առ.} = \frac{Q_{առ.}}{Q} \cdot 100\% \quad (1)$$

Վեր սերվերի օգտագործման արդյունավետությունը կարելի է գնահատել մի շարք ցուցանիշներով.

1. Սերվերի տարաքանույթ մուտքերի արդյունավետությունը ($E_{առ. i}$) ցույց է տալիս այդ սերվեր մուտքեր ապահովելու նպատակով տարբեր աղբյուրների օգտագործման հաճախականությունը: Դա որոշվում է տվյալ աղբյուր հաճախումների ($Q_{առ. i}$) և սերվերի ընդհանուր հաճախումների (Q_0) հարաբերությամբ.

¹ Տես Աօթ Ծիռը Ա., Ռածանաց յե՞լ ի ի ու ու, 2008, էջ 120:

$$E_{\omega\eta\beta.i} = \frac{Q_{\omega\eta\beta.i}}{Q_0} \cdot 100\% \quad (2)$$

որտեղ i –ն տվյալ աղբյուրի անվանումն /համարն/ է:

2. Վեր էջերի հաճախումների արդյունավետության գնահատականը մատնանշում է ($E_{t\beta}$) վեր էջի հաճածանազ լինելու աստիճանը: Յուրաքանչյուր էջի համար այդ ցուցանիշը որոշվում է տվյալ էջի հաճախումների ($Q_{t\beta}$) և ընդհանուր սերվերի ընդհանուր հաճախումների (Q_0) հարաբերությամբ.

$$E_{t\beta} = \frac{Q_{t\beta}}{Q_0} \cdot 100\% \quad (3)$$

որտեղ i –ն տվյալ էջի անվանումն /համարն/ է:

3. Կրկնվող հաճախումների քանակը ($K_{\psi\eta\beta}$) ցույց է տալիս վեր մարթեինքի երկրորդ իհմնական գործառույթը (առաջինը սերվերի սկզբնական հաճախումներն ապահովելն է)՝ առավելագույնի հասցնել սերվերի կրկնվող հաճախումների քանակը: Այս ցուցանիշը որոշվում է սերվեր ընդհանուր հաճախումների (S_0) և այդ սերվեր հաճախորդների (S) քանակով².

$$K_{\psi\eta\beta} = \frac{S_0}{S} \quad (4)$$

4. Ցուցանակային (բաներային) գովազդի արդյունավետությունը ($E_{p.i}$) կախված է այն հաճախորդների քանակից, ովքեր գովազդի շնորհիվ օգտվել են բաների հղումից և հաճախել ընկերության կայք: $E_{p.i}$ ցուցանիշի մեջությունը հաշվարկվում է գովազդային ցուցանակը (բաները) պարունակող էջի հաճախումների ($S_{p.i}$) և բաների հղումից օգտվողների (S_{0i}) քանակների հարաբերությամբ.

$$E_{p.i} = \frac{S_{p.i}}{S_{0i}} \cdot 100\%$$

որտեղ՝ i – ն հղման անվանումն /համարն/ է:

Տեղեկատվական տեխնոլոգիաները բնութագրող դիտարկված ցուցանիշները տնտեսական չեն: Ինչ վերաբերում է ցանցային տնտեսության օգտագործման արդյունավետության տնտեսական ցուցանիշներին, ապա դրանք կարող են որոշվել ցանցային տնտեսության կիրառումից ստացված արդյունքի և այդ արդյունքին հասնելու համար կատարված ծախսերի հարաբերությամբ:

Այսպիսով՝ տնտեսական արդյունավետությունը (E) կարող է հաշվարկվել հետևյալ ձևով:

$$E = \frac{S}{C} \quad (5)$$

որտեղ՝ S -ը ծառայության և ապրանքի արտադրության ծախսերի խնայողությունն է, որը գործարարության, առևտութի, գովազդային և այլ ոլորտներում ցանցային տեխնոլոգիաների կիրառման արդյունք է, C -ն՝ ցանցային տեխնոլոգիաների օգտագործման դեպքում կատարվող ծախսերը:

²Տես **Առաջ Ծովունք Ա.**, Աշվ. աշխ., էջ 121:

Բնականաբար, ընկերությունը, որ ցանկանում է մրցակից ընկերություն-ների նկատմամբ իր տեղեկատվական առավելությունը դարձնել տնտեսական, չի կարող խուսափել արտադրության մեջ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման համար անհրաժեշտ ներդրումներից³:

Ծախսերի արդյունավետությունը շուկայական տնտեսության պայմաններում կարող է որոշվել հետևյալ ձևով.

$$\sum_{i=1}^N (B_i - C_i - K_i) \frac{1}{(1+r)} = 0 \quad (6)$$

որտեղ՝ B_i -ն արտադրության մեջ ցանցային տեխնոլոգիաների կիրառումից ստացված արդյունքի արժեքային գնահատականն է,

C_i -ն՝ i -րդ ժամանակահատվածում (տարում) ցանցային տեխնոլոգիաների ներդրման լրացուցիչ ընթացիկ ծախսերը,

K_i -ն՝ i -րդ ժամանակահատվածում(տարում) միանվագ կապիտալ ծախսերը,

N -ը՝ հաշվարկային ժամանակահատվածների քանակը (տարի),

r -ը՝ տվյալ ժամանակահատվածի (տարվա) հաշվարկային տոկոսադրույքը, զեղչման գործակիցը:

Որոշելով կամ ներմուծելով B_i , C_i , K_i , N մեծությունները՝ կարելի է հաշվել ցանցային տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը, որը գնահատվում է r -ի մեծությամբ:

(6) հավասարումը կարելի է դարձնել անհավասարում.

$$\sum_{i=1}^N (B_i - C_i - K_i) \frac{1}{(1+r_n)^i} > 0 \quad (7)$$

որտեղ՝ r_n - ը տոկոսադրույքի (արդյունավետության ցուցանիշի) նորմատիվային արժեքն է:

Եթե (7) անհավասարումը պահպանվում է, ապա ցանցային տեխնոլոգիաների օգտագործման համար ֆինանսական ներդրում կատարելը նպատակահարմար է:

Արդյունավետության գնահատումը կիխնի ավելի ճշգրիտ, եթե (7) բանաձևի մեջ ներմուծվեն շահույթի հարկման և արժեգրկման գործակիցները:

Այսպիսով՝ տնտեսական արդյունավետությունը որոշելու համար անհրաժեշտ է սահմանել ծախսերի տեսակները և պարզել ցանցային տեխնոլոգիաների շնորհիվ այդ ծախսերի կրծատման չափը:

Ծախսերը կարելի է դասակարգել ըստ միանվագ կապիտալ և ընթացիկ ծախսերի: Միանվագ կապիտալ են համարվում.

- սկզբնական վերլուծության և պլանավորման նպատակով կատարվող ներդրումները,
- անհրաժեշտ սարքավորումների ծեռքբերման ծախսերը (օրինակ՝ վեր սերվեր),
- ծրագրային ապահովման ծախսերը,
- կապուղիների կազմակերպման և դրա հետ կապված սարքավորումների ծեռքբերման համար ներդրումները,

³Տես Աօթ Ծուռը Ա., Աշվ. աշխ., էջ 122:

- օժանդակ սարքավորումների ձեռքբերման նպատակով կատարվող անհրաժեշտ ծախսերը (օրինակ՝ վեր սերվերի տեղեկատվության թարմացում, դրա կարգավորում և աշխատունակության ապահովման համար անհրաժեշտ համակարգչային տեխնիկա),
- վեր սերվերի աշխատունակությունը ընկերության ներքին ռեսուրսներով սպասարկելու դեպքում կադրերի պատրաստման և վերապատրաստման հետ կապված ներդրումները:

Ընթացիկ են համարվում.

- սպասարկող կազմի աշխատավարձը,
- օժանդակ նյութերի ծախսերը,
- դոմենի անվան հետ կապված ներդրումները,
- կապուտիների վարձակալման վճարները,
- ծառայություն մատուցող ընկերության (պրովայդերի) վճարները, որոնք կապված են վեր սերվերի մուտքի, տարածքի տրամադրման կամ սպասարկման հետ,
- ամորտիֆացիոն հատկացումները,
- սերվերի, կայքի ձևավորման կամ գործառույթների կատարելագործման համար այլ ընկերությունների ներգրավման հետ կապված լրացուցիչ ծախսերը,
- գովազդային ծախսերը:

Խնայողությունը կախված է վեր սերվերի գործառույթներից: Ավանդական հարաբերակցման փոխարեն օգտագործելով էլեկտրոնային եղանակները՝ նվազեցվում են տպելու, հեռախոսային խոսակցությունների, ֆաքսերի ուղարկման և այլ ծախսերը: Անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման շնորհիվ ապահովվում է օգտագործողների սպասարկումը մինչև ապրանքի գնելը և դրանից հետո:

Այս ամենի հետ մեկտեղ պետք է հաշվի առնել, որ ցանցում լինելը, բացի ծախսերի կրծատումից, ընկերությանը կարող է նաև շահույթ ապահովել.

- բարձրացնելով ընկերության ապրանքանիշի հեղինակությունը,
- նպաստելով ապրանքների առաջխաղացմանը,
- ներգրավելով նոր սպառողների,
- ստեղծելով արտադրանքի տարածման նոր եղանակ,
- բարելավելով ծառայության սպասարկումը գործող և հավանական սպառողների համար:

Հաշվի առնելով նշված առանձնահատկությունները և ցանցային տեխնոլոգիաների արդյունավետության գնահատման ցուցանիշները՝ հարկ է որոշել անպային համակարգերի արդյունավետության հաշվարկման եղանակը: Այդ նպատակով ավելի մանրամասն դիտարկենք անպային համակարգերի առավելություններն ու թերությունները:

80-20 կանոնը հաճախ օգտագործվում է տարբեր կազմակերպություններում փոքր բանակի միավորների մեջ ազդեցությունները ցույց տալու համար: Դա առաջին անգամ ներկայացրել են գործարարության կառավարման մասնագետ Ջոզեֆ Ֆուրանը և իտալացի տնտեսագետ Վիլֆրեդո Պարետոն, ով 1906 թ. նկատել էր, որ իտալիայում հողերի 80%-ը պատկանում է բնակչության 20%-ին: Սա ոչ թե բացարձակ, այլ ընդհանրացված ցուցանիշ է ռեսուրսների անհավասարաչափ բաշխվածության վերաբերյալ: Դրա հայտնի կիրառությունը առևտրում 80-20 կանոնն է, ըստ որի վաճառքից ստաց-

Ված եկամտի 80%-ն ապահովում է գնորդների 20%-ը⁴: Այսինքն՝ գնորդների միջև վաճառքից ստացված եկամուտների բաշխվածությունը հավասարացնի չէ (80/20):

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտն ունի յուրահատուկ՝ 80-20 կանոններ: Քլատույուի հաշվետվության⁵ համաձայն՝ «Գարթներ» ընկերության ծախսերի 80%-ը կազմում են SS սպասարկման ծախսերը⁶:

Այնուամենայիպ, 80-20 կանոնը SS բնագավառում վերաբերում է ինչպես դրամական ծախսերին, այնպես էլ ժամանակին: Դիտարկելով սեփական տվյալների կենտրոնի ենթակառուցվածքը շահագրիծող ընկերությունները և համադրելով նշված ու շատ այլ ընկերությունների օրինակներ՝ կարելի է եզրակացնել, որ ժամանակի միայն 20%-ն է հատկացվում գործարադրության համար արժեք ներկայացնող ծրագրերի շահագրիծմանը: Այս հարաբերությունը ցույց է տալիս, թե ինչպես են առօրյա և ոչ հիմնական գործառույթները (գործառնական համակարգի թարմացումներ, նորոգումներ, տվյալների ռեգերվային կրկնօրինակում և արխիվացում և այլն) ազդում տեղեկատվական տեխնոլոգիաների ստորաբաժանման ժամանակի վրա:

Ամպային համակարգն օգնում է փոխել ժամանակի այս հարաբերությունը և SS դեպարտամենտին հնարավորություն ընձեռում իր ժամանակի 80%-ը տրամադրելու հիմնական գործառույթների, օրինակ՝ գործարարության ծրագրերի նախագծմանը: Հիմնական գործառույթների վրա ծախսվող ժամանակը և գումարները 20%-ից հասցնելով մինչև 80%-ի՝ ամպային համակարգերը արդյունավետ դարձնելու հնարավորություն է ստեղծվում:

Ներկայիս մոդելների անարդյունավետությունը փաստացի երևում է այլընտրանքային արժեքից, որ ընկերությունները վճարում են իրենց սեփական հաշվողական պահանջները կառավարելու համար:

Այլընտրանքային արժեքի գաղափարն առաջին անգամ ներկայացրել է բրիտանացի փիլիսոփա Ջ. Միլը: Այլընտրանքային ծախսը միմյանց բացառող տարրերակներից որևէ մեկի արտադրության համար գոհարերված արժեքն է: Այլընտրանքային արժեքը չի սահմանափակվում դրամական արտահայտությամբ. Վատնած ժամանակը, հաճույքը կամ ցանկացած այլ եկամուտ պետք է նույնականացնել որպես այլընտրանքային արժեք⁷: Այլընտրանքային ծախսը ներքին ծախսն է, որը, ըստ Ջ. Գոռթնիի, սեփական ռեսուրսների այլընտրանքային արժեքն է, որոնք այլ ոլորտներում օգտագործվելու դեպքում սեփականատիրոջը կապահովեն աշխատավարձ, տոկոս, ռենտակամ այլ եկամուտ⁸:

Ամպային համակարգերի տնտեսագիտական քննության մեջ կարևոր նշանակություն ունի այլընտրանքային ծախսը, քանի որ հնարավորություն է տալիս գնահատելու ցանկացած գործողության իրական արժեքը: Ենթակառուցվածքի պահպանումը, առանց տեխնոլոգիայի փոփոխման, անվանվում է **ստատուս քվի** իրավիճակ: Օրինակ՝ SS ոլորտի որոշակի ուղղության համար ծախսերն ընտրելիս կարող է որևէ հստակ արժեք չկրնել **ստատուս քվի**

⁴ Տե՛ս http://en.wikipedia.org/wiki/Pareto_principle

⁵ Տե՛ս **Kepes B.**, Diversity Limited, Revolution not Evolution. How Cloud Computing Differs from Traditional IT and Why it Matters, 2011:

⁶ Gartner Report, <http://www.gartner.com/newsroom/id/497088>

⁷ Տե՛ս http://en.wikipedia.org/wiki/Opportunity_cost

⁸ Տե՛ս **Ջ. Գոռթնի, Ո. Ստրոուա**, Տնտեսագիտություն. մասնավոր և հասարակական ընտրություն, Եր., 1999, էջ 545:

իրավիճակը պահպանելու համար. տվյալների կենտրոններն արդեն կառուցված են, ծրագրային ապահովումը՝ ձեռք բերված: Այնուամենայնիվ, հաշվարկների մեջ ներառելով այլընտրանքային ծախսը, տարբեր ընտրությունների միջև ավելի ճշգրիտ համեմատության հնարավորություն է ստեղծվում:

Այլընտրանքային արժեքի գաղափարը կարող ենք կիրառել SS ոլորտի կառավարման որոշումներ կայացնելիս (օրինակ՝ պահպանե՞լ լոկալ (տեղային) SS ենթակառուցվածքը, թե՞ տեղափոխել անպային համակարգ): Ինչպես նշվել է, SS ժամանակի և ֆինանսական ծախսերի մոտավորապես 80%-ը կատարվում է ընկերության ոչ հիմնական գործառույթների իրականացման նպատակով (ստատուս քվի վիճակը պահպանելուց բացի): Հետևաբար՝ անպային համակարգ ընտրելու այլընտրանքային ծախսն այն եկամուտն է, որը կարող էր առաջանալ այդ ընկերության կողմից 80% ռեսուրսների արդյունավետ օգտագործումից: Ավելի պարզ ամպային համակարգ տեղափոխումը կարող է ընկերության գործունեության արդյունավետությունը 20%-ից հասցել 80%-ի:

Վերոհիշյալ հաստատելու համար անհրաժեշտ է դիտարկել համապատասխան օրինակներ՝ կապված ամպային համակարգ տեղափոխվելիս այլընտրանքային արժեքի և իջեցված ծախսերի ստացված եկամուտների հետ: Ծատ կարևոր խնդիր է կապիտալ ծախսերից ընթացիկ ծախսերին անցման ձեռքբերումները սահմանելը:

Փոխվում է ընթացիկ և կապիտալ ծախսերի հարաբերակցությունը: Ավանդական SS ծախսերը կապիտալ ուղղվածություն ունեն: Համակարգչային սարքավորումները և ծրագրային ապահովման արտոնագրերը ձեռք են բերվում նախապես: Այս պատճառով տեխնոլոգիայի ծախսերի մասին որոշումների կայացման գործընթացը ձգձգվում է: Ամպային համակարգերի հիմնական դրույթներից մեկը ծախսերի պարբերականության մոդելն է: Դա ննան է հեռախոսակապի և էլեկտրաէներգիայի ծախսերին, քանի որ դիտարկվում է որպես ստանդարտ ընթացիկ ծախս: Ընթացիկ ծախսերը կապիտալ ծախսերի նկատմամբ մի շարք առավելություններ ունեն: Ընթացիկ ծախսերը շահավետ են ընկերության համար, քանի որ դրանք ձկուն են և կարելի է դադարեցնել ըստ պահանջի: Կապիտալ ծախսերի դեպքում ընկերությունը ամբողջովին կապված է ձեռք բերված սարքավորումներին և ծրագրային ապահովմանը, այսինքն՝ տվյալ տեխնոլոգիայից կախվածության մեջ է գտնվում⁹: Դրա հետ մեկտեղ, անկախ ձեռք բերված սարքավորումների և ծրագրային ապահովման օգտագործումից, դրանց համար գոյանում են ընթացիկ ծախսեր (օրինակ՝ ամորտիզացիոն հատկացումներ): Ընթացիկ ծախսերի դեպքում, եթե որևէ ապրանք այլևս չի շահագործվում, վճարումները կտրուկ նվազում են: Հենց այս պատճառով էլ շատ ընկերություններ ծառայողական մեքնաներ ձեռք բերելու փոխարեն նախընտրում են դրանք վարձակալել:

Ստորև ներկայացված են երկու ծրագրային, երկու տվյալների բազայի սերվերից և մեկ բեռնվածքի բաշխիչ սարքից բաղկացած ենթակառուցվածքի համար հաշվարկված ծախսերը լոկալ SS, կառավարվող ծառայությունների և ամպային համակարգերի պարագայում¹⁰:

⁹ Տե՛ս Խ.Նազարեթյան, ժամանակակից ցանցային տնտեսությունը և դրա հիմնախնդիրները, «Բանբեր ՀՊՏՀ», 2012(1), էջ 112:

¹⁰ Տե՛ս Reese G., The Economics of Cloud Computing, 2008,
<http://broadcast.oreilly.com/2008/10/the-economics-of-cloud-c.html>

	Լոկալ SS	Արտաքին կառ. SS	Ամպային համակարգ
Կապիտալ ներդրում (\$)	40.000	0	0
Տեղակայման ծախսեր (\$)	1.000	5.000	1.000
Ամսական ծառ. վճարներ (\$)	0	4.000	2.400
Ամսական աշխատավարձ (\$)	3200	0	1000
Եռամյա ծախսեր (\$)	149.000	129.000	106.000
Խնայողություն (%)	0	13	29

Որոշումներ կայացնելու հնարավորություն է ստեղծվում: Գրեթե բոլոր ընկերություններում կապիտալ ծախսերի առնչությամբ գործում են խիստ և պարզ կանոններ: Ըստ այդմ անհատական բիզնես միավորները չեն կարող որոշումներ կայացնել այդպիսի ծախսերի վերաբերյալ: Ընթացիկ ծախսերի վերաբերյալ որոշումները հաճախ կայացվում են անհատական բիզնես միավորների կողմից: Այսպիսով՝ անհատական բիզնես միավորները, իրենց գործարարության որոշակի պահանջներին համապատասխան, տեխնոլոգիաների ընտրության հնարավորություն են ունենում: Հենց այս բիզնես միավորի կամ նույնիսկ անհատական մակարդակում ձկունությունը ամպային համակարգերի օգտագործման ընդլայնման կարևոր խթան է:

Հաղթահարվում են ծախսերի սահմանափակումները: Խոշոր կապիտալ հայթայթելը բարդ խնդիր է ցանկացած չափի կազմակերպության համար: Սա, մասմավորապես, վերաբերում է փոքր ընկերություններին, որոնց համար ֆինանսական ընկերությունները (բանկեր, վարկային կազմակերպություններ և այլն) սահմանում են պարտքի և կապիտալի բավական խիստ հարաբերություն՝ դրանով իսկ սահմանափակելով այդ ընկերությունների վարկավորումը: Այս պատճառով էլ ընկերությունների համար մեծ դժվարություն է ներկայացնում բազմաքանակ նախագծերի հաստատման նպատակով կապիտալ ծախսերի բաշխումը: Ընթացիկ ծախսերի մոդելին անցմանք հաղթահարվում են այս սահմանափակումները, հնարավորություն է ստեղծվում փոքր ծավալի նախագծերն իրականացնել առանց կապիտալ ծախսերի:

Մինչդեռ, կապիտալ ծախսերից ընթացիկ ծախսերին անցումը գրավիչ հանգամանք է ընկերությունների համար, տիրապետման ընդհանուր արժեքն էլ /TCO/ ավելի պարզ է արտացոլում ամպային համակարգերի տնտեսական առավելությունները:

Տիրապետման ընդհանուր արժեք /TCO/: SS ենթակառուցվածքի լոկալ և ամպային տարբերակները համեմատելիս անհրաժեշտ է ճշգրիտ գնահատել դրանց իրական արժեքները: Կարևոր է նշել, որ ամպային համակարգերի դեպքում բոլոր ծախսերը նախապես հայտնի և հեշտությամբ հաշվարկելի են, քանի որ:

- Ամպային ծառայություններ մատուցող ընկերությունները օգտագործման տարբեր չափորոշիչների (օպերատիվ հիշողություն-RAM, տվյալների հիշողություն, ցանցային ռեսուրսների արագություն և այլն) դեպքում սահմանում են հստակ գներ:
- Գինը հիմնականում սահմանվում է ըստ միավոր ժամանակի: Հաճախորդների համար հստակ են դաշնում գները, և նրանք կարողանում են հեշտությամբ հաշվարկել ծախսերը՝ ըստ կիրառվող չափորոշիչների:

- Բ. Գոլդենն իր հոդվածում¹¹ անդրադառնում է լոկալ և ամպային տեխնոլոգիաների միջև ուղղակի գնային համեմատություն կատարելու բարդությանը: Նա նշում է, որ լոկալ տեխնոլոգիայի օգտագործման ծախսերի հաշվարկներում ներառված չեն.
- սերվերի շահագործման ուղղակի ծախսերը. էլեկտրաէներգիա, հողատարածք և այդ ռեսուրսների կառավարման համար անհրաժեշտ SS գործառություններ,
- սերվերի շահագործման անուղղակի ծախսերը. ցանցային ու տվյալների հիշողության ենթակառուցվածք և ընդհանուր ենթակառուցվածքի կառավարման համար անհրաժեշտ SS գործառություններ,
- սերվերի շահագործման օժանդակ ծախսերը. հաշվապահական հաշվառում, կարճ ժամանակահատվածում խիստ անհրաժեշտ ապրանքների մատակարարում, SS կառավարում:

Թաքնված այս ծախսերը բարդացնում են տվյալ երկու տեխնոլոգիաների ծախսերի ուղղակի համեմատությունը: Զ. Քումին իր աշխատանքում ներկայացրել է տվյալների կենտրոնների տիրապետման ընդհանուր արժեքի հաշվարկի եղանակներ, որոնք կարելի է օգտագործել ամպային և լոկալ տեխնոլոգիաների համեմատության համար¹²:

Անկախ վերը նշված խնայողությունից, ամպային համակարգերն ապահովում են լրացուցիչ շահույթ՝ ընկերությանը հնարավորություն տալով SS-ի միջոցով կենտրոնանալու գործարարության խնդիրների լուծման վրա: Սա կարող է շատ ավելի գրավիչ լինել, քան որևէ այլ հնարավոր խնայողություն:

Այսպիսով՝ ամպային համակարգերի արդյունավետությունը գնահատելու համար անհրաժեշտ է հաշվարկային ժամանակահատվածում համեմատել լոկալ և ամպային համակարգերում SS ենթակառուցվածքի ընդհանուր տիրապետման ծախսերը: Նշված ենթակառուցվածքի արդյունավետությունը որոշելիս հարկ է հաշվի առնել տեխնոլոգիայի փոփոխման հետ կապված ծախսերը (աշխատակազմի վերապատրաստում, ենթակառուցվածքի տեղափոխում այլն): Ամպային համակարգերի արդյունավետությունը կարելի է որոշել հետևյալ բանաձևով.

$$E = TCO_{\text{ամպ.}} - TCO_{\text{լոկալ}},$$

որտեղ՝ $TCO_{\text{ամպ.}}$ - ը ամպային համակարգում SS ենթակառուցվածքի ընդհանուր տիրապետման արժեքն է,

$TCO_{\text{լոկալ}}$ - ը՝ տեղակայված SS ենթակառուցվածքի ընդհանուր տիրապետման արժեքը:

Ըստ բանաձևի՝ ամպային համակարգերի արդյունավետությունը ձշգոհտ գնահատելու համար անհրաժեշտ է դիտարկել երկու համակարգերում SS ենթակառուցվածքի ընդհանուր տիրապետման արժեքի բաղադրիչները, ինչպես նաև հաշվի առնել դիտարկվող ժամանակահատվածում այլընտրանքային ներդրումների արժեքը.

¹¹ Տե՛ս **Golden B.**, Capex vs. Opex: Most People Miss the Point About Cloud Economics, 2009 http://www.cio.com/article/484429/Capex_vs._Opex_Most_People_Miss_the_Point_About_Cloud_Economics

¹² Տե՛ս **Koomey J.**, A Simple Model for Determining True Total Cost of Ownership for Data Centers, Uptime Institute White Paper, 2007:

$\text{TCO}_{\text{լոկալ.}} = C_1 + C_2 + C_3 \dots + C_n,$
 որտեղ՝ $C_1 + C_2 + C_3 \dots + C_n$ - ը լոկալ ենթակառուցվածքի պահպանման բոլոր
 անհրաժեշտ ծախսերն են,

$\text{TCO}_{\text{ամպ.}} = C_{\text{վարձ.}} + C_{\text{փոռփ.}}$
 որտեղ՝ $C_{\text{վարձ.}}$ - ը հաշվարկային ժամանակահատվածում ամպային համա-
 կարգերի օգտագործման ամսական վճարների գումարն է,
 $C_{\text{փոռփ.}}$ - ը՝ հաշվարկային ժամանակահատվածում տեխնոլոգիայի
 փոփոխման հետ կապված ծախսերը:

Այսպիսով՝ հաշվարկվող ժամանակահատվածում, հաշվի առնելով այլ-
 ընտրանքային ներդրումները, կարելի է ստանալ հետևյալ անհավասարու-
 թյունը.

$$\sum_{i=1}^N (C_{1i} + C_{2i} + C_{3i} + C_{ni}) \frac{1}{(1+r_n)^i} - \sum_{i=1}^N (C_{վարձ.i} + C_{փոռփ.i}) \frac{1}{(1+r_n)^i} > 0$$

որտեղ՝ C_i - ն i -րդ ժամանակահատվածում տեխնոլոգիայի պահպանման
 նպատակով պահանջվող ծախսերն են,
 N - ը՝ հաշվարկային ժամանակահատվածների քանակը,
 r - ը՝ տվյալ ժամանակահատվածի հաշվարկային տոկոսադրույթը,
 զեղչման գործակիցը:

Եթե առկա է այս անհավասարությունը, ապա ընտրված հաշվարկային
 ժամանակահատվածում անցումն ամպային համակարգերին արդյունավետ
 կլինի:

ԾԱՀԱԾՈԹ Ի ԱՅԱԹԱԾԻ

Աղյուսակագրություն (ի ընդունություն)

Դօմեն ի բազածածքային պահանջման հաշվում դեռ օճառությունը հաջախառնական է: - Այս ամենը նույնական է անօպտիմալ օպերատորների համար և այս պահանջման հաշվում դեռ օճառությունը հաջախառնական է:

Դուքսը անօպտիմալ օպերատորների համար անհաջախառնական է այս պահանջման հաշվում դեռ օճառությունը հաջախառնական է:

Դուքսը անօպտիմալ օպերատորների համար անհաջախառնական է այս պահանջման հաշվում դեռ օճառությունը հաջախառնական է:

Դուքսը անօպտիմալ օպերատորների համար անհաջախառնական է այս պահանջման հաշվում դեռ օճառությունը հաջախառնական է:

KHACHATUR NAZARETYAN

Post-graduate at SEUA (Polytechnic)

Efficiency Assessment of Cloud Systems.- In this paper the efficiency of networking technologies and features of cloud system efficiency assessment are discussed. Especially the Rule 80-20, opportunity cost, the ratio of operating and capital expenditures and total cost of ownership are considered. The cloud system efficiency calculation formula is introduced.

